Azg
armenian daily
9 ՅՈՒՆԻՍ 1998 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 101 (1604)

3000 դոլարի վնաս «ԱՐ» հեռուստաընկերությանը

երեկ, ժամը 13-ի սահմաններում, Երեւանի Սարյան 8 հասցեում, այն պահին, երբ Կենտրոն համայնքի ոստիկանությունն ու դատարանի կատարածուն ի կատար էին ածում «ԱՐ» հեռուստաընկերության աշխատակցուհու ընտանիքի վտարումը բնակարանից, վրա են հասնում նույն հեռուստատեսության փոխնախագահ Վահրամ Մարտիրոսյանն ու օդերեւութաբաններ եւ փորձում նկարահանել գործողությունը: Այդ արարքը դուր չի գալիս դատարանի կատարածուին, որ աղտակում է օդերեւութաբաններից Վիգեն Տատուրյանին եւ պահանջում հեռանալ: Հեռուստատեսության փոխնախագահի միջամտությունից հետո կատարածուն փոխանակ զգաստանալու, փորձում է վերջինիս նույնպես ներքաշել ծեծկռտուքի մեջ, որի արդյունքում, նաեւ ոստիկանների կողմից միջամտության հետեւանքով ջարդվում են 2 տեսախցիկները (Պանասոնիկ M-2000), «ԱՐ» հեռուստակայանին հասցնելով շուրջ 3000 դոլարի վնաս: «ԱՐ» հեռուստաընկերության նախագահ Մերուժան Տեր-Գուլանյանի ասելով, իրենք պատրաստվում են դատական գործ հարուցել համապատասխան մարմինների դեմ, որոնք տարիներ անց դեռեւս չեն սովորում հարգել զանգվածային լրատվամիջոցների պրոֆեսիոնալ աշխատանքը, թափանցիկ աշխատելու իրենց պարտականությունը:

Մ. ՄԱՍԵՐՅԱՆ

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ

Ֆրանսիական «Պեռնո Ռիկար»-ը հաղթող է ճանաչվել «Կոնյակի» մրցույթում



ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի կառավարությունը Երեւանի կոնյակի գործարանի մասնավորեցման մրցույթում հաղթող է ճանաչել ֆրանսիական «Պեռնո Ռիկար» (Pernod Ricard) խումբը: Ինչպես հայտնեց կոնյակի գործարանի մասնավորեցման կառավարական հանձնաժողովի անդամ, տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների նախարար Վահրամ Ավանեսյանը, գործարքը, որի արժեքն է 30 մլն դոլար, կկնքվի մոտակա շաբաթվա ընթացքում: «Պեռնո Ռիկարը» պարտավորվել է նաեւ առաջիկա հինգ տարում ներդնել առնվազն 30 մլն ֆրանսիական ֆրանկ (5 մլն դոլար) Հայաստանում խաղողագործությանը զարկ տալու համար:

Համաձայն սպասվող պայմանագրի, գործարանի բաժնետոմսերի 100 տոկոսը վաճառվելու է «Պեռնո Ռիկարին», ընդ որում 2 մլն դոլարը «Պեռնո Ռիկարը» վճարելու է անմիջապես, իսկ 28 մլն.-ը՝ ոչ ուշ, քան դեկտեմբերի 10-ին: Ֆրանսիական կողմը պնդել է այդ հաղորդման վրա, որպես երաշխիք, որ հայկական կողմը ակնհայտորեն չի խանգարի գործարքին:

Պրն Ավանեսյանը եւ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդվարդ Սանդոյանը հերքեցին այն պնդումները, թե գործարանը վաճառվել է իրականից ավելի ցածր գնով (մասնավորապես, իբր թե նրա միայն սպիրտների պաշարը գնահատվում է 60 մլն դոլար): Նրանց խոսքերով, գործարանը գնահատվել է ելնելով միջազգային պրակտիկայում ընդունված այնպիսի չափանիշներից, ինչպիսիք են շահույթի հարաբերությունը ակտիվներին եւ վաճառքների ծավալին: Նշվեց, որ գնահատման համար կիրառվել է նույն չափանիշը, ինչը եւ իր «Պեռնո Ռիկարի» արժեքը գնահատելիս: Ըստ նախարարների, հիշյալ գինը արժանացել է Հայաստանի շահերը ներկայացնող «Մերիլ Լինչ» ֆիրմայի հավանությանը:

Վաճառքի պայմանների թվում են.

Տես էջ 8

ԼՂՀ

Արկադի Ղուկասյանն ընդունեց Լեոնարդ Պետրոսյանի հրաժարականը

Հունիսի 8-ին ԼՂՀ ղեկավար Արկադի Ղուկասյանն ընդունեց Ստեփանակերտ ժամանած հանրապետության վարչապետ Լեոնարդ Պետրոսյանին, որը նախագահին ներկայացրեց իր հրաժարականը: «Իմ կարծիքով կարեւորն այն է, որ որոշումը նախագահի կողմից արդեն ընդունված է, ասաց Լ. Պետրոսյանը: Այն դրականորեն կանդրադառնա հանրապետության ներքին իրադրության կայունացման իմաստով»: Լ. Պետրոսյանը շնորհակալություն հայտնեց ԼՂՀ նախագահին, կառավարության անդամներին եւ ՀՀ իշխանություններին համագործակցության համար, ինչպես նաեւ սփյուռքի այն կազմակերպություններին, որոնք մասնակցել են ԼՂՀ կառավարության ծրագրերի իրականացմանը:

Անդրադառնալով հետագա պլանների խնդրին, Լ. Պետրոսյանը նշեց, որ մտադիր է առայժմ հանգստանալ: Նրա ապագա գործունեությունը կախված կլինի իշխանությունների առաջարկություններից:

Նույն օրը Լեոնարդ Պետրոսյանը վերադարձավ Երեւան:

Այսօր, հունիսի 9-ին, նախնական տվյալներով, տեղի կունենա ԼՂՀ Ազգային ժողովի արտահերթ նիստը, որի ընթացքում պատգամավորները կքննարկեն ԼՂՀ կառավարության մասին օրենքում ԼՂՀ նախագահի առաջարկած փոփոխությունները: Վերհիշեցնենք, որ ըստ այդ առաջարկության, ԼՂՀ նախագահը կստանձնի նաեւ վարչապետի պարտականությունները եւ նրան կարգի փոխվարչապետների ինստիտուտ:

ՎԱՀԱԳՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՍԻՄ-ը եւ Հայկ Բաբուխանյանը տրամադրված են մարտականորեն

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես հայտնի է, Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը հունիսի 5-ին դիմել է ՀՀ դատախազություն՝ «Իրավունք» թերթի խմբագիր Հայկ Բաբուխանյանին պատասխանատվության կանչելու հայցով՝ կապված վերջինիս կողմից խորհրդարանի հասցեին արված որակումների հետ:

Հունիսի 8-ին ՍԻՄ-ի գրասենյակում անցկացրած մամուլի ասուլիսում Հայկ Բաբուխանյանը ոչ միայն հաստատեց իր նախկին պնդումները, թե խորհրդարանը «ապօրինի եւ հանցագործ» կառույց է, այլ նաեւ ավելի սուր ինքնադատություն եւ պիտակներ ներկայացրեց: 1995 թվականի խորհրդարանական ընտրությունները ապօրինի էին, նշեց Հ. Բաբուխանյանը, քանի որ անցկացվել են ահաբեկումների, «բանդիտիզմի», կուսակցությունները փակելու, թեկնածուներին ու կուսակցություններին անօրինական կերպով չգրանցելու եւ նման այլ կարգի «հանցագործությունների մթնոլորտում»: Դրանց շարունակությունը համարվեցին 1996 թ. ընտրությունները, նույն թվականի սեպտեմբերի 26-ի Ազգ հայտնի նիստը, պետական վարկերի փոշիացումը, ձեռնարկությունների անօրինական սեփականաշնորհումը եւ այլն: Այդ մասին, հայտնեց «Իրավունքի» խմբագիրը, իրենք ամեն օր բազմաթիվ նամակներ են ստանում, եւ Խոսրով Հարությունյանին խորհուրդ տվեց գոնե մեկ օր գալ եւ ընթերցել այդ նամակները: Զարմանալի է միայն, նշեց նա, որ նախկինում ձայն չհանած մարդիկ, ինչպես՝ Խոսրով Հարությունյանը, ներկայումս վիրավորված են զգացել այս մասին բարձրաձայն ասվելուց, մինչդեռ նույն «Իրավունք» թերթը բազմիցս նման հրապարակումներ արել է:

Հ. Բաբուխանյանը եզրակացրեց, որ Ազ-ն ներկայումս տանիք է դարձել որոշ անձանց անպատիժ մնալու համար, որ խորհրդարանի, նախկին իշխանությունների հետ կապված անձանց դիրքերը երերալու պատճառով Ազ նախագահը փորձում է ճնշել խոսքի ազատությունը, սակայն նախկին իշխանությունների ժամանակ երբեք չլռած «Իրավունքը» եւ ՍԻՄ-ը ներկայումս էլ չեն լռելու: Հայկ Բաբուխանյանը եւ ՍԻՄ-ը պատրաստ են մինչեւ վերջ պայքարել, նույնիսկ ուրախ են, որ հարցը մեծ հնչեղություն է ստանալու, որի ժամանակ հնարավոր կլինի շատ հանցագործություններ բացահայտել ու մեղավորներին պատժի կանչել:

ՍԻՄ-ի նախագահ Հրանտ Խաչատրյանը եւս նշեց, որ կուսակցությունը եւ ինքն անձամբ լիովին համաձայն են Բաբուխանյանի հետ, մանավանդ որ Հայկ Բաբուխանյանը նաեւ ՍԻՄ-ի փոխնախագահն է: Նույնիսկ «Տեր-Պետրոսյանի ռեժիմի ժամանակ», նշեց պրն Խաչատրյանը, իրենք երբեք չեն արժանացել զրպարտչի որակավորման, եւ անակնկալ է, որ ներկայումս դա հայտարարում է Ազ նախագահը: Հրանտ Խաչատրյանն այս ամենի վերաբերյալ ակնկալում է ՀՀ նախագահի խաղաղական գնահատականը:

Խմբ. կողմից - Մեզ թվում է, որ հարցը խոստանում է հասարակական հնչեղություն ստանալ ոչ հօգուտ Ազգային ժողովի: «Իրավունքի» գլխավոր խմբագրի կամ «Մամուլի ակումբ» հաղորդաշարի մյուս մասնակիցների հրապարակավ արտահայտած կարծիքը Ազգային ժողովի անդամներից շատերի մասին կարող էր հեռուստ պատժելի արարք նկատվել, եթե այդ մասին արդեն նախապես, դեռեւս 1998 թ.-ից., ձեւավորված հասարակական կարծիք չլիներ, նույնքան եւ ավելի բացասական: Եվ այդ կարծիքի ձեւավորման մեջ մեղավորը լրագրողները չեն, նույնիսկ եթե երբեմն իրենք ավելի սուր ու մերկապարանոց են ներկայացնում:

Ուշացած արտահերթ նիստ

Ազ-ն բաց քվեարկությամբ՝ 58 կողմ, 3 դեմ, 43 ձեռնպահ ձայներով մերժեց Ազ արտահերթ նստաշրջան գումարելու Կոմկուսի առաջարկը, նիստ, որի օրակարգում «Կոնյակի» գործարանը սեփականաշնորհման ցուցակից դուրս բերելու հարցն էր: 58 կողմ պատգամավորների թվում ողջ «Հայրենիք» պատգամավորական խումբն էր, «Հանրապետություն», «Շամիրամ», Կոմկուս խմբակցությունները, ՀՅԴ միակ պատգամավոր Ռուբեն Հակոբյանը, իսկ ԱԺՄ-ից եւ ԻՄ-ից միակ ներկա Դավիթ Վարդանյանն ու Ներսես Զեյնալվանդյանը, «Բարեփոխիչներից» եւս մեկ սկզբունքային պատգամավոր գտնվեց՝ խմբի նախագահ Արմեն Մարտիրոսյանը: Կառավարության արմատական կողմնակիցները «Կոնյակի» սեփականաշնորհման հարցում 3 «երկրպահներ» էին՝ Ալբերտ Բազեյանը եւ Ալբերտ Հերոյանը, Հայրապետյան Համլետը: Մնացյալ երկրպահները, բարեփոխիչները, անկախները ձեռնպահ էին. ամենաանվտանգ, բայց անսկզբունքային դիրքորոշում:

«Հայրենիք» պատգամավորական խումբը, ԱԺՄ-ն եւ Կոմկուսը նախաձեռնեցին երկրորդ (կառավարության ասուլիսից հետո գուցե ուշացած) արտահերթ նիստը, նոր օրակարգով: Եդ. Եգորյանը «Ազգին» պարզաբանեց. «Հնարավոր է, որ հարցը լսելուց հետո մենք սեփականաշնորհման խնդիրը չենք հարցականի տակ դնում, այլ սեփականաշնորհման պայմանները: «Կոնյակի» տարբերությունը շատ այլ գործարաններից այն է, որ «Կոնյակը» շահութաբեր ձեռնարկություն է: Հարց է առաջանում, լինելով շահութաբեր, նա պետք է վարկեր եւ ներդրումներ ստանալու դժվարություններ չունենա, այդ դեպքում ինչո՞ւ ենք վաճառում, եթե վաճառվում է բյուջեի դեֆիցիտը ծածկելու համար, ապա ինչո՞ւ այսքան փոքր գումարով»: Այսպիսով «Հայրենիքը», ԱԺՄ-ն եւ Կոմկուսը այսօր 18:15 կփորձեն գումարել մի նոր արտահերթ նիստ՝ քննարկելու 1999 թ. սեփականաշնորհման ծրագրի շրջանակներում «Կոնյակի» սեփականաշնորհման հարցը եւ պայմանները:

Հ. Գ. Նիստից առաջ ցուցարարները պատգամավորներին ուղերձ առաքեցին. «Լսիր ժողովրդի ձայնը, կանխիր հերթական թալանը: Կոնյակի գործարանը ազգային արժանապատվություն է: Վաճառքը՝ դավաճանություն»:

ՆԱՐԻՆԵ ԳԻԼԲԱՐՅԱՆ

«ՀԱՅԷՆԵՐԳՈ»

Կաշառքը որպես էներգակիր

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒՆԻՍ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես հաղորդվել է, առանձնապես խոշոր չափերի հասնող կաշառքներ ստանալու համար հունիսի 2-ին ձերբակալվել են «Հայէներգո» ՊՓԲԸ գործադիր տնօրենի պաշտոնակատար Ստեփան Ասլանյանը, գործադիր տնօրենի տեղակալ Արտավիր Մարտիրոսյանը եւ գլխավոր հաշվապահ Սանուկ Զոհրաբյանը:

«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» դուստր ձեռնարկության տնօրեն Ժիրայր Փափազյանի եւ «Լար» ՍՊԸ-ի տնօրեն Գեղամ Հովակիմյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է չհեռանալու մասին ստորագրությունը:

Հարուցված քրեական գործով կասկածյալներ նախքանչությամբ պարզվել է, որ «Լար» ՍՊԸ տնօրեն Գ. Հովակիմյանը 1996-97 թթ. ընթացքում «Հայէներգո» ՊՓԲԸ-ի եւ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՊՁ-ի հետ կնքած պայմանագրերի հիման վրա կատարել է տարբեր հզորության տրանսֆորմատորների տեղափոխումներ ու շինվերանորոգման աշխատանքներ, որոնց դիմաց վճարումները ժամանակին եւ ամբողջությամբ ստանալու նպատակով Գ. Հովակիմյանը 1996-98 թթ. ընթացքում շուրջ 12 մլն դրամ կաշառք է տվել «Հայէներգոյի» գլխավոր հաշվապահ Մ. Զոհրաբյանին եւ 18 հազար ԱՄՆ դոլար «Բարձրավոլտ»-ի տնօրեն Ժ. Փափազյանին: Կասկածի վերաբերյալ Հովակիմյանը հանդես է եկել հայտարարությամբ եւ տվել ցուցմունքներ, որոնք պնդել է նշված երկուսի հետ առերես հարցաքննությունների ժամանակ: Ի դեպ, գործով անցնող անձինք բոլորն էլ իրենց ցուցմունքները պնդել են առերես հարցաքննություններում:

Ըստ Մ. Զոհրաբյանի ցուցմունքի, ինքը Գ. Հովակիմյանից ստացել է 12 մլն դրամ կաշառք, որից շուրջ 10 միլիոնը որպես կաշառք տվել է «Հայէներգոյի» փոխտնօրեն Ա. Մարտիրոսյանին նրա եւ գործադիր տնօրեն Ս. Ասլանյանի միջեւ բաժանելու համար:

Ըստ «Բարձրավոլտի» տնօրեն Ժ. Փափազյանի ցուցմունքի, Գ. Հովակիմյանից ստացած 18 հազար դոլարից 10 հազարը ինքը որպես կաշառք տվել է դարձյալ Ս. Ասլանյանին:

Մեկ այլ դրվագ եւս. Ասլանյանը եւս 13 հազար դոլար կաշառք է ստացել ծծմբական թթու ձեռք բերելու ընթացքում:

ՀՀ դատախազության վարույթում գտնվող քրեական գործի նախաքննությունը շարունակվում է, իսկ ինչ վերաբերում է թերթերում պտտվող այն լուրերին, թե այս ձերբակալությունների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազը պետք է հանդես գար հայտարարությամբ, չեն համապատասխանում իրականությանը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱԿ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Նախագահը փորձում է խորհրդարանի հետ հարթել ճգնաժամային իրավիճակը

Ռոբերտ Քոչարյան. «Երկրապահի» հետ հանդիպումից հետո

– Պրն Քոչարյան, ԱԺ-ում սա ձեր առաջին հանդիպումն էր «Երկրապահ» պատգամավորական խմբի հետ, ի՞նչ հարցեր քննարկվեցին, եւ համարո՞ւմ եք արդյոք «Երկրապահին» ձեր քաղաքական հենարանը:

– «Երկրապահը» ընտրությունների ժամանակ ինձ հետ էր, եւ այսօր նաեւ խորհրդարանում է ինձ հետ, բայց որոշակի հարաբերություններ ճշտելու խնդիր կար, կար համագործակցության խնդիր, ես իմ կարծիքը ներկայացրի: Բնական եմ համարում, որ տարաձայնություններ կան կառավարության տնտեսական քաղաքականության եւ «Երկրապահի» մոտեցումների միջեւ: Պետք է ավելի հաճախ հանդիպել, նաեւ վարչապետի հետ: Խորհրդարանի հետ պետք է շատ լուրջ աշխատել, որ մանր-մունր հարցերի պատճառով ճգնաժամային իրավիճակներ չստեղծվեն:

– «Կոնյակի» վերաբերյալ հարց եղա՞վ:

– «Կոնյակը» լավագույն գործարքներից մեկն է, այո, հարց եղավ, եւ ես պարզաբանեցի: Պրոբլեմ կար նաեւ մախային ոլորտի հետ կապված, բայց դա ոչ թե մախանենգության, այլ մարդկային հարաբերությունների խնդիր էր: Ես կարծում եմ, որ միջամտության անհրաժեշտություն կա:



հին» ձեր քաղաքական հենարանը:

– «Երկրապահը» ընտրությունների ժամանակ ինձ հետ էր, եւ այսօր նաեւ խորհրդարանում է ինձ հետ, բայց որոշակի հարաբերություններ ճշտելու խնդիր կար, կար համագործակցության խնդիր, ես իմ կարծիքը ներկայացրի: Բնական եմ համարում, որ տարաձայնություններ կան կառավարության տնտեսական քաղաքականության եւ «Երկրապահի» մոտեցումների միջեւ: Պետք է ավելի հաճախ հանդիպել, նաեւ վարչապետի հետ: Խորհրդարանի հետ պետք է շատ լուրջ աշխատել, որ մանր-մունր հարցերի պատճառով ճգնաժամային իրավիճակներ չստեղծվեն:

– «Կոնյակի» վերաբերյալ հարց եղա՞վ:

– «Կոնյակը» լավագույն գործարքներից մեկն է, այո, հարց եղավ, եւ ես պարզաբանեցի: Պրոբլեմ կար նաեւ մախային ոլորտի հետ կապված, բայց դա ոչ թե մախանենգության, այլ մարդկային հարաբերությունների խնդիր էր: Ես կարծում եմ, որ միջամտության անհրաժեշտություն կա:

Ալբերտ Բազեյան. ԱԺ փոխխոսնակ, «Երկրապահ»

– «Երկրապահը» հաղթական պատասխանատվություն է կրում իր վրա, սակայն այդ պատասխանատվությունն իրականացնելու հնարավորություններ մենք չունենք: Կառավարությունն անցկացնում է իր տնտեսական քաղաքականությունը, որի վրա ազդելու մեր հնարավորությունները բավական փոքր են, ուստի «Երկրապահը» չի կարող կառավարության տնտեսական քաղաքականության համար պատասխանատվություն կրել: Մենք փորձեցինք ճշտել նաեւ նախագահի տեսակետները: Ասեմ, որ արտաքին քաղաքականությունը մենք դրական ենք գնահատում: Պրոբլեմները վերաբերում են ներքին քաղաքականությանը: Ինչպես ասացի, կառավարության տնտեսական ուղեգծին, ինչպես նաեւ պետական լրատվության՝ լինել թե չլինելուն: Եթե պետական լրատվամիջոցներ պետք է լինեն, ապա արդյոք նրանք չպե՞տք է իրականացնեն որոշակի պետպատվեր: «ՀՀ»-ն հարցազրույց է տպում Գիժ Գեւորկի հետ եւ դրանով ինչ-որ բաներ է ասում: Մի՞թե պետք են նման լրատվամիջոցներ: Հեռուստատեսության հետ ես առնչվելու հնարավորություններ չունենք, ինչ-որ բան իր տեղում չէ:

Անհայտ մնալ կամեցող «Երկրապահ»

– Մենք նախագահի առջեւ բարձրացրեցինք մախային վարչության խնդիրը: Մախային վարչության պետը մախակետերի պետեր է նշանակել իր թաղի, իր շրջապատի արհեստավարժներին, բարեկամներին, որոնք էլ կարգադրում են իրենց մախավորներին որեւէ գործարարի բեռները ձեւակերպել, թե ոչ: Մախասանը անօրինականություններ եւ անտեղի ֆաբրիկներ են ստեղծվել: Նախագահը խոստացավ միջոցներ ձեռնարկել:

ՆԱՐԻՆԵ ԳԻԼԲԱՐՅԱՆ

«Թող չգնի ոչ մի հայ մարդ, հայ գործարար, եթե...»

Պարզաբանում է «Կոնյակի» շկայացած գնորդ Անդրանիկ Մանուկյանը

– Ես «Ազգ» օրաթերթից տեղեկացա, որ «Պեռնո Ռիկար» ընկերությունը 30 մլն դոլար է առաջարկել Երեւանի «Կոնյակի» գործարանի համար, այդ լուրն ստացել էին նաեւ Մոսկվայի եւ Ֆրանսիայի իմ գործընկերները: Ես անմիջապես դիմեցի ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդվարդ Սանդոյանին՝ նրան առաջարկեցի 35 մլն դոլար գործարանին սեփականատեր դառնալու համար: Նա դեմ չէր, բայց նշեց, թե այդ խնդրով զբաղվում է ոչ թե ինքը, այլ Վահրամ Ավանեսյանը: Նախարար Վահրամ Ավանեսյանը ինձ հայտարարեց, թե մրցույթն արդեն ավարտվել է, ամեն ինչ վերջացած է: Բայց հետո ասաց, թե 10 մլն կանխավճար մուծիր, եթե հանկարծ դրանից հետո մնացած 25 մլնը հրաժարվես վճարելուց, այդ 10 մլնը կմնա բյուջեին եկամուտ: Ես համաձայնեցի, խնդրեմ, վճարենք, բայց համաձայնագիր, փաստաթուղթ տվեք այդ 10 մլն դոլար կանխավճարի համար: Հենց իր ներկայությամբ զանգահարեցի արտերկրի իմ գործընկերներին, նրանք համաձայն էին պայմանագրով մուծել գումարը: Պրն Ավանեսյանը հրաժարվեց փաստաթուղթ տրամադրելուց:

– Իսկ ովքե՞ր են ձեր գործընկերները եւ արդյոք դուք պատրա՞ստ եք հայտարարագրել ձեր եկամուտները:

– Շատ խոշոր գործարարներ են, Մոսկվայում «Ավտովազի» իմ գործընկերները, որոնք մեծահարուստներ են եւ 35 մլն կվճարեին: Ես այսքան ժամանակ լուրջ գործարար մարդու տպավորություն եմ թողել, եւ եթե ասում էի կվճարեմ, ապա լուրջ հիմքեր ունեի՝ նման հայտարարություն կատարելու համար: Երբ գումարները գային, կներկայացվեին նաեւ դրանց հայտարարագրերը:

– Դուք ձեռնպահ եք քվեարկել ԱԺ արտահերթ նիստ գումարելու առաջարկին, այսինքն՝ ձեզ համոզե՞լ են, որ չարժե, որ «Կոնյակի» սեփականատեր դառնա որեւէ հայ գործարար:

– Թող չգնի ոչ մի հայ մարդ, հայ գործարար, թող գնեն ֆրանսիացիները: Վարչապետը, եւ ապա նախագահը բացատրեցին, եւ ես հասկացա, որ եթե միջազգային հայտնի որեւէ ընկերություն գնի գործարանը, գուցե ավելի լավ կլինի: Բայց 5 տարի հետո նոր գնորդը կարող է փոխել գործարանի ուղղությունը: Եթե նրանք փոխեն դա, ապա «Կոնյակի» գործարքը կլինի ամենաանհաջողը: Ամենախոշոր մտահոգություններից մեկը հետեւյալն է, որ ֆրանսիացիները պետք է ոչ միայն ավելի լավ կազմակերպեն արտադրությունը, այլեւ պահպանեն իրացման շուկան, արտադրության ծավալները: Ռուսական շուկայում հայկական կոնյակը ավելի մեծ տեղ ունի, քան ֆրանսիականը, եթե «Պեռնո Ռիկարը» նպատակ չունենա ռուսական շուկայից դուրս մղել հայկական կոնյակը, ուրեմն, կրկնում եմ, ես այս գործարքը կիամարեմ լավագույնը: Ես չեմ սոռրագրել արտահերթ նիստ գումարելու առաջարկի ներքո, իսկ քվեարկությանը ձեռնպահ էի: Դուք լավ գիտեք պատճառները... որպես շահագրգիռ կողմ ես ձեռնպահ եմ:

Ն. Դ.

Վերահսկիչ պալատին՝ այո՛

Նախագահի եւ կառավարության վերահսկիչներին ԱԺ-ն կասկածում է

Երկուշաբթի խորհրդարանում տոնական մթնոլորտ էր ծննդյան տարեդարձ, պատգամավորի նորամուտ (Մարտին Սարգսյանն առաջին անգամ մասնակցեց ԱԺ նիստերին) եւ նախագահի սպասում. Ռոբերտ Քոչարյանը հանդիպելու էր «Երկրապահ» պատգամավորական խմբի հետ ճշգրտելու՝ ո՞վ է քաղաքական իր հենարանը, արհեստավարժների կառավարությո՞ւնը, թե՞ «Երկրապահը» կազմավորված նախկին «Հանրապետություն» խմբակցությունից, «Սոցիալական պետությունից», «Բարեփոխումներից»:

Մինչ սպասումների կայացումը, ԱԺ-ն լիաթոք վավերացրեց Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվությունը պատշաճական տեղեկագրում այն տպագրելու որոշմամբ: Բոլոր պատգամավորները, առանց բացառության, գովեստի խոսքեր ուղղեցին ՎՊ-ին, իսկ ԱԺՄ խմբակցության անդամ Սեյրան Ավագյանը քաղաքական նրբիմաստով առաջարկություն կատարեց՝ լուծարել գործադիր եւ մնացյալ մարմիններում գործող վերահսկողական ծառայությունները, որոնք լրացուցիչ աուդիտով միայն անորոշություններ կարող են ստեղծել. «Լուծումը միակն է՝ ունենանք միասնական վերահսկիչ մարմին, որի օրինակը կա շատ երկրներում: Ապա թե ոչ նախագահը ունի իր վերահսկողական ծառայությունը, կառավարությունն իրենը, խորհրդարանն իրենը: Անհրաժեշտ է պետության վերահսկողական գործառույթ իրականացնող գերագույն վերահսկիչ մարմին»:

Հիշենք, որ Դավիթ Վարդանյանին ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության պետ նշանակելու առաջարկն այդպես էլ չի ստացել փաստաթղթային ձեւակերպում. Ռոբերտ Քոչարյանի հրամանագիրը չկա, թեեւ ԱԺՄ-ն եւ անձամբ Դավիթ Վարդանյանը երկու շաբաթ է, ինչ տվել են իրենց համաձայնությունը: Պատգամավորները նշեցին, որ Վերահսկիչ պալատը տվել է տնտեսագիտական գնահատականներ, իսկ քաղաքական գնահատականներ պետք է տան օրենսդիրները: Լեոնիդ Հակոբյանը եւս կողմնակից էր ընդհանուր վերահսկողական մեկ մարմնի ձեւավորման ոչ հոետորական հարցադրմամբ. «Ի՞նչ են անում նախագահի, կառավարության վերահսկողական ծառայությունները»:

Վարկերի օգտագործումն ուսումնասիրող հանձնաժողովի կազմավորումը, ինչպես նաեւ ԿԲ տարեկան հաշվետվության քննարկումը հետաձգվեցին այսօրվան: Թեեւ ԱԺ-ն ըմբռնանում էր օտարերկրյա խորհրդատվական ծառայությունների դեմ, բայց խորհուրդների կարիք բոլորն ունեին. ԱԺ-ում գիտեն իրենց հակառակորդների հասցեները եւ անունները, բայց. «Անուններն էլ գիտենք, ազգանուններն էլ, հասցեներն էլ, բայց վախ կա. հանկարծ մեզ բան չլինի», ի մի բերեց պատգամավոր Լեոնիդ Հակոբյանը:

Ն. ԱՂԱԼԱՆՅԱՆ

ԳՈՒՅԺ

Գալուս Խանենց

Թեհրանից՝ Իրանահայ ազգային եւ մշակութային միությունից եւ Թեհրանահայ գրական շրջանակից երեկ ստացանք հետեւյալ գույժը:

Սույն թվականի հունիսի 4-ին ծերունական հասակում, կարճատեւ հիվանդությունից հետո, իր մահկանացուն կնքեց իրանահայ գրող, բանաստեղծ եւ թարգմանիչ, ազգային եւ հասարակական գործիչ Գալուս Խանենցը:

Թաղմանը նախորդող եկեղեցական արարողությունը կատարվելու է այսօր, երեքշաբթի, հունիսի 9-ին, կեսօրից հետո ժամը 2-ին, Թեհրանի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցում, որից հետո հանգուցյալի մարմինն ամփոփվելու է Թեհրանի Նոր բուրաստան գերեզմանատանը:

Գալուս Հակոբի Խանենցը (Խանյան) ծնվել է 1910 թ. հունվարի 24-ին, Թեհրանում: Նախնական կրթությունը ստացել է Սեն-Լուի ֆրանսիական դպրոցում, ապա ճարտարապետի մասնագիտություն է ստացել Թեհրանի համալսարանի ճարտարապետության ֆակուլտետում:

Որպես ճարտարապետ-ինժեներ աշխատել է Բանկ մելլիում եւ ֆինանսների նախարարությունում:

1927 թ. սկսած աշխատակցել է հայ մամուլին: «Նոր էջ» գրական խմբակցության եւ համանուն հանդեսի հիմնադիրներից է, հետագայում նաեւ իրանահայ գրողների միության հիմնադիրներից է եղել, իսկ 1961-66 թթ.-ին՝ նրա փոխնախագահը, որտեղ անդամակցել է նաեւ «Իրանահայ արդի գրողներ» գրի խմբագրական կազմին:

1979 թ. մի խումբ համախոհների հետ հիմնադրել է Իրանահայ ազգային եւ մշակութային միությունը, որի նախագահն էր 1979-1986-ը:

1981-83 թթ. «Փյունիկ» հասարակական հանդեսի գրական բաժնի վարիչն էր:

Հիմնադիրներից է թեհրանահայ գրական շրջանակի եւ «Հանդիպում» պարբերագրի:

1974 թ. արժանացել է Թեհեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» գրական մրցանակի:

1986 թ. Գ. Խանենցը պաշտոնական հրավերով մասնակցեց Հայաստանի գրողների միության 9-րդ համագումարին:

1938 թ. Գ. Խանենցը ամուսնացել է Աստղիկ Տեր-Սուքիասյանի հետ: Ունի երկու զավակ՝ Արմեն եւ Նինա:

Գ. Խանենցը 1998 թ. հունիսի լույս 5-ի կեսգիշերին մահացավ Թեհրանի իր բնակարանում, խոր վիշտ պատճառելով հայ գրականության սիրահարներին:

Աճյունին խաղաղություն:

Սիոն վարդապետ. Գլխատում 80 տարի առաջ

Թոռնուհու վկայությունը

Այս պատմությունը միգուցե երբեւէ իր հրապարակումը ունեցել է, բայց վերջին շրջանում թուրքական լրատվամիջոցների եւ պետական այրերի կողմից Հայոց ցեղասպանությունը հերքող մերկապարանոց հայտարարությունները դրդեցին վերհիշել երեւանաբնակ տարեց բժշկուհու՝ Հռիփսիմե Տեր-Թովմասյանի պապի եղերական մահը: Թոռնուհին չի հիշում իր պապի ծննդյան տարեթիվը, բայց քաջատեղյակ է, որ նա լինելով Սուրմալուի շրջանի Բլուր գյուղից եւ հոգեւոր կրթությունը ստանալով Ս. Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում, 1918 թ.-ին դարձել է վայրագ թուրքերի զոհը: Դեռեւս աշխարհական Թադեւոս Տեր-Մանվելյանին ճակատագիրը առաջին լուրջ հարվածն է հասցնում կյանքից հեռանում է նրա կինը՝ թողնելով չորս երեխաների: 1880-ականների սկզբին Խրիմյան Հայրիկի հրավերով նա գալիս է Ս. Էջմիածին եւ ձեռնադրվում վարդապետ՝ ստանալով Սիոն անունը: Էջմիածնից Սիոն վարդապետին ուղարկում են Նոր Բայազետ որպես հոգեւոր առաջնորդի: 1905-1906 թթ.-ին շարունակում է պաշտոնավարել Ախալցխայում: 1907-ից հոգեւոր հովվությունը շարունակում է Նախիջեւանի Ս. Գեւորգ եկեղեցում: 1915 թ.-ի կոտորածներից երեք տարի անց, 1918-ին թուրքերը հասնում են նաեւ Նախիջեւանի շրջան: Նախիջեւանի քաղաքագլուխ Պաղտ Քուլիբեկյանը, դումայի մեկ ներկայացուցիչ եւ Սիոն վարդապետը նախապատրաստում են կանանց եւ երեխաների փախուստը: Մինչ այդ պատվիրակություն են ուղարկում թուրքերին ընդառաջ, որպեսզի կանխեն արյունահեղությունը: Սակայն բոլորին կոտորում են: Այդժամ Սիոն վարդապետը երկու օր է խնդրում իր ժողովրդից նվիրատվություն հավաքելու եւ Բաց խանին ուղարկելու համար: Այդ խնդրում նրան օգնում են Ղազանչի գյուղի մեծահարուստները: Առաջին օրը 1000 մանուկ ու կին 600 զինվորների ուղեկցությամբ Ալագյազի վրայով հասնում են երեւան: Սակայն երկրորդ օրվա քարավանը ընկնում է թուրքերի ծուղակը եւ ենթարկվում անմարդկային խոշտանգումների: Իսկ Սիոն վարդապետին որպես կազմակերպչի գլխատում են եւ գլուխը կախում եկեղեցու դռնից: Դա 1918 թ.-ի հունիսն էր: Այլ մանրամասներ թոռնուհուն չեն հասել:

Հ. ԱՍԱՏՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէնութիւն / հեռ. 562863
Համակարգչային ծառայութիւն / 581841
Apple Macintosh համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

«Անհրաժեշտ է կտրուկ շրջադարձ հատկապես սոցիալ-տնտեսական բնագավառում»

«Ղարաբաղյան հակամարտության աղի փուլում ԼՂՀ-Ադրբեջան ռազմաքաղաքական դիմակայությունը ձեւափոխվել է կողմերի տնտեսական կարողությունների մրցակցության»: Լրագրողներին հունիսի 8-ին ասաց զորամասի փոխհրամանատար, արցախյան գոյամարտի ակտիվ մասնակից Էլմիրա Աղայանը: Նրա համոզմամբ՝ ԼՂՀ զինվորական ուժերի փայլուն հաղթանակը պետք է զուգակցվի տնտեսության վերականգնմամբ ու վերելքով, պատերազմում աննկարագրելի զրկանքներ կրած բնակչության կենսամակարդակի կտրուկ բարելավմամբ: Արցախյան բանակը կատարեց իր մարտական բոլոր առաջադրանքները: Սակայն ռազմական հաջողությունը, ըստ տիկին Աղայանի, դեռ բավարար չէ ԼՂՀ-պետականության վերջնական կայացման համար:

Փխրուն զինադադարի ու դեռեւս չավարտված պատերազմի պայմաններում անհրաժեշտ է իրականացնել սկզբունքորեն նոր տնտեսական ու կադրային քաղաքականություն, որը միտված կլինի ժողովրդի սոցիալական բազմաբիվ խնդիրների լուծմանը, արտագաղթի կասեցմանը, բնակավայրերի վերաբնակեցմանը: Այլապես տնտեսական ներկայիս կացությունը ի վերջո կարող է հանգեցնել ռազմական ապագա անհաջողությունների: ԼՂՀ-ի եւ ՀՀ-ի իշխանությունների մի շարք ներկայացուցիչներ բազմիցս նշել են, որ ԼՂՀ տնտեսությունը պետք է զարգանա առաջանցիկ բայերով: «Դժբախտաբար ԼՂՀ կառավարության ներկայիս կազմը, որոշ բացառություններով, ի վիճակի չէ շտկելու ստեղծված իրավիճակը: Անհրաժեշտ են նոր ու թարմ ուժեր, ոչ ստանդարտ մտածելակերպ ու գործելակերպ, անկոտրում կամք ունեցող անձնավորություններ, որոնք ցույց կտային ելքը ճգնաժամային իրավիճակից: Այդ ներուժը Ղարաբաղն ունի», ասաց տկն Աղայանը:

Նա նշեց, որ ԼՂՀ զինվորական ուժերը չեն կարող անտարբեր հետեւել ժողովրդի սոցիալական վիճակի վատթարացմանը, քանի որ այդ տխուր գործընթացը ուղղակիորեն առնչվում է հանրապետության պաշտպանունակությանը: Բացի այդ, նշեց Աղայանը, սոցիալական տարբեր պահանջներով մեզ են դիմում զոհվածների հարազատները, մինչդեռ նման խնդիրներով պետք է զբաղվի կառավարությունը: «Քաղաքական որոշ գործիչներ սխրում են ընդգծել, որ ԼՂՀ-ն եւ ՀՀ-ն գտնվում են տնտեսական նույն դաշտում: Դա այդպես է: Սակայն չպետք է մոռանալ, որ Ղարաբաղը դարավոր բշնամու առաջին հարվածներն ընդունողն է: Ռուսի ռազմական գոտում աղքատ մարդը, ինչպես բոլոր նորմալ երկրներում, պետք է գտնվի արտոնյալ վիճակում, որպեսզի չհիասթափվի ու շարունակի պայքարը: Մերկ հայրենասիրությամբ ու քաղցրաբառ կարգախոսներով երկար չես պայքարի տնտեսական զարգացման լույսը հեռանկարներ ունեցող հակառակորդի դեմ: Պետք է կտրուկ շրջադարձ եւ բարոյա-հոգեբանական, եւ հատկապես սոցիալ-տնտեսական բնագավառներում», նշեց փոխհրամանատարը:

Տիկին Աղայանն ընդգծեց, որ ԼՂՀ-ն ունի հնարավորություններ, բնակչության աշխատավարձերի, կենսաթոշակների, գործազուրկների ու ազատամարտիկների նպաստների բարձրացման համար: «Անհրաժեշտ են միայն ցանկություն, նպատակասլացություն ու արհեստավարժ կառավարության ձեւավորում: Արժանապատիվ կյանքի իրավունքը մեր ժողովուրդը վաստակել է արյամբ, դառն ու հյուծիչ պայքարով: Եվ ոչ ոք իրավատու չէ զրկելու նրան այդ իրավունքից», վերջում ասաց տկն Աղայանը:

ՎԱՀԲՈՒՀ ՂԱՍԱԲՅԱՆ

Բնակարանային վեճ «հացադուլային վերջաբանով»

ՀՀ նախագահի նստավայրի մոտ դարձյալ հացադուլ է: Այս անգամ բողոքի այս ծայրահեղ միջոցով արդարադատության ատյանների նկատմամբ իր անհամաձայնությունն է հայտնում 1988 թվականի հայտնի իրադարձություններից հետո Բաքվից Երեւան տեղափոխված Սիլվա Հակոբյանն իր երկու տարեկան փոքրիկի՝ Արմանի հետ, որը ծնվելուց ի վեր «կախված է օդում» (ապրում է Երեւանում, սակայն, ինչպես մայրը, որեւէ տեղ գրանցված չէ)՝ փողոց շրտվելու «դամոկլյան սրի» ներքո:

Հակոբյանների Բաքվի բնակարանը 1988 թ.-ին հաջողությամբ փոխանակվել է Երեւանյանց Երեւանյան բնակարանի հետ, իսկ վերջինս՝ 1995 թ.-ի հունվարին երկու եւ մեկսենյականոց բնակարանների, որոնցից մեկում (Նորքի 5-րդ զանգվածի թիվ 35 շենքի 47 համարի երկսենյականոցում) տեղավորվել է Ս. Հակոբյանը՝ բնակարանը գնելով ոմն Օֆելյա Օհանյանից, որն իր հերթին բնակարանը գնել էր 1994 թ.-ի օգոստոսին Նադեժդա Ղարիբյանից, վերջինս, տունը վաճառելուց հետո մեկնել էր Ուկրաինա: Երկու ամիս անց, սակայն, հայտնվել է առաջին տանտիրուհու նախկին ամուսինը (Սամվել Ղարիբյան)՝ բնակարանի լիիրավ տիրոջ «կարգավիճակով» վիճարկելով Ս. Հակոբյանի սեփականության իրավունքը: Խորհրդային շրջանի ժողդատարանը հարցը լուծել է հօգուտ Սամվել Ղարիբյանի (վերջինս կնոջից բաժանվելուց հետո բնակարանում համակեցության իրավունք էր ստացել, սակայն, հարեւանների վկայությամբ, խնդրո առարկա բնակարանում չէր ապրել): Ս. Հակոբյանի բողոքից հետո Գերագույն դատարանը բեկանել է ժողդատարանի վճիռը՝ նոր դատաքննություն «պատվիրելով»: Արդարադատության նժարն այս անգամ թեքվել է Հակոբյանի օգտին: Սակայն, հակառակ կողմի հայցով, Գերագույն դատարանն այս անգամ էլ բեկանել է ժողդատարանի վճիռը: Առաջին ատյանի կարգով գործը քննվել է Գերագույն դատարանում՝ ավարտվելով

Սամվել Ղարիբյանի հաղթանակով. Ս. Հակոբյանին բնակարանից վտարելու եւ վերջինս Ս. Ղարիբյանին հանձնելու որոշմամբ: Հակոբյանը դիմել է ՀՀ Գերագույն դատախազ Հենրիկ Խաչատրյանին՝ ԳԴ ղեկավարին բողոք բերելու խնդրանքով: Խնդրանքը մերժվել է: Հակոբյանը հացադուլ է հայտարարել դատախազության շենքի մոտ, եւ Գերագույն դատախազը բողոք է բերել ղեկավարին: Սակայն, ղեկավարը պատասխանել է ԳԴ առաջին ատյանի դատիվը՝ մերժելով Հակոբյանին եւ հաստատելով վտարման վճիռը: Հակոբյանը սխալված դիմել է Ռոբերտ Քոչարյանին: Վտարումը կասեցվել է՝ մինչեւ խորհրդային շրջանի դատախազությունում սկսված քննության ավարտը: Ընթացող քննության դատավարությունում Ղարիբյանը հասցրել է սեփականաշնորհել բնակարանը՝ չնայած դատախազությունում (ինչպես հավաստել են Հակոբյանին) հարուցված երեք քրեական գործերին բնակարանի առուվաճառքի տարբեր դրվագներով: Քննության ավարտն ակնկալվում է հունիսի 12-ին, սակայն Գերագույն դատախազն արդեն իսկ արտոնել է վտարման գործողությունը, որ կատարման ենթակա է հունիսի 9-ից:

Սիլվա Հակոբյանը հարցնում է, արդյո՞ք ինքն է մեղավոր կամ դատապարտելի Ղարիբյանի հաղթանակով. Ս. Հակոբյանին բնակարանից վտարելու եւ վերջինս Ս. Ղարիբյանին հանձնելու որոշմամբ: Հակոբյանը դիմել է ՀՀ Գերագույն դատախազ Հենրիկ Խաչատրյանին՝ ԳԴ ղեկավարին բողոք բերելու խնդրանքով: Խնդրանքը մերժվել է: Հակոբյանը հացադուլ է հայտարարել դատախազության շենքի մոտ, եւ Գերագույն դատախազը բողոք է բերել ղեկավարին: Սակայն, ղեկավարը պատասխանել է ԳԴ առաջին ատյանի դատիվը՝ մերժելով Հակոբյանին եւ հաստատելով վտարման վճիռը: Հակոբյանը սխալված դիմել է Ռոբերտ Քոչարյանին: Վտարումը կասեցվել է՝ մինչեւ խորհրդային շրջանի դատախազությունում սկսված քննության ավարտը: Ընթացող քննության դատավարությունում Ղարիբյանը հասցրել է սեփականաշնորհել բնակարանը՝ չնայած դատախազությունում (ինչպես հավաստել են Հակոբյանին) հարուցված երեք քրեական գործերին բնակարանի առուվաճառքի տարբեր դրվագներով: Քննության ավարտն ակնկալվում է հունիսի 12-ին, սակայն Գերագույն դատախազն արդեն իսկ արտոնել է վտարման գործողությունը, որ կատարման ենթակա է հունիսի 9-ից:

Սիլվա Հակոբյանը հարցնում է, արդյո՞ք ինքն է մեղավոր կամ դատապարտելի

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ

Դատարանը փախուստի է դիմում

«Ազգ» թերթի 1998 թ. ապրիլի 2-ի համարում ծանուցվել էր, որ «ապրիլի 3-ին, ժամը 11-ին, Մյասնիկյանի շրջանի ժողդատարանում նորից կվերսկսվի տարիներ ձգվող մի գործի լսում»: Գործի էությունը բնակարանային վեճ է (համատարած հիվանդություն), որի պատկանելության հարցն արդեն 3-րդ տարին դարձել է բանահյուսության նյութ: Այս մասին թերթն անդրադարձել էր դեռեւս 1995 թ. հուլիսի 22-ին եւ 1995 թ. օգոստոսի 9-ին: Առաջինը կատարված կեղծիքի մասին էր, իսկ երկրորդը՝ դատավորի ինքնարդարացման փորձն էր, որը դատաիրավական մարմինների անունից հայտարարված թելադրական շատ հեռեւությունների տեղիք էր տալիս: Իրոք, լրագրային հետաքննության նյութ է, «սա այն դեպքն է, ուր մամուլը, անաչառ ու հետեւողական լինելու նախապայմանով, կարող է օժանդակել հարցի ճիշտ լուծմանը»:

Դատը չլսվեց՝ մեղադրյալ կողմի կրկին դատարան չներկայանալու պատճառով: Հայցվորը կենտրոնական թաղամասերանն էր: Մաշտոցի պողոտայի 60 շենքի թիվ 3 բնակարանը սեփականացվել է կեղծ փաստաթղթով եւ կեղծ ստորագրությամբ, քաղաքացի Տիգրան Հարությունի Մելքոնյանի կողմից: Տուժող քաղաքացիները դիմում են Մյասնիկյանի շրջանի ժողդատարան: Վերջինս մերժում է հայցը վարույթ ընդունելը «վաղեմության ժամկետը բաց թողած լինելու» պատճառաբանությամբ: Շրջխորհրդի գործադիր կոմիտեն, երբ իմանում է կեղծիքի մասին, այս անգամ ինքն է հայց ներկայացնում շրջանի ժողդատարան: Դատարանի նախագահը՝ Մարաս Կասվալյանը, մերժում է հայցը վարույթ ընդունելը՝ խախտելով ՀՀ քաղդատարանի օրենսգրքի 36-րդ եւ 30-րդ հոդվածները: Երկու հայցվորները՝ տուժող քաղաքացին եւ շրջխորհրդի գործկոմը ԳԴ են դիմում «մասնավոր գանգատներով»: Հանրապետության դատախազությունը հանդես է գալիս պետական շահերի պաշտպանության օգտին եւ «հսկողական բողոք» է բերում Գ. Դ.-ին, եւ Գերագույն դատարանի քաղաքացիական գործերի դատական կոլեգիան 1995 թ. դեկտեմբերի 13-ի նիստով բեկանում է Մյասնիկյանի շրջանի ժողդատարանի նախագահի 1995 թ. հունիսի 28-ի «որոշումը» եւ գործը վերադարձնում է նույն ժողդատարանին քննելու համար: Ժողդատարանը, սակայն, գործը սառեցնում է մինչեւ շրջխորհրդի գործկոմի ֆունկցիաների սառեցումը: Այնուհետեւ ՀՀ դատախազության հանձնարարությամբ քաղաքաթեթարանը, հանդիսանալով գործադիր կոմիտեի իրավահաջորդն ու պետական գույքի տերը, նոր հայցով է հանդես գալիս 1997 թ. մայիսին «Մաշտոցի պողոտայի 60 շենքի թիվ 3 բնակարանի սեփականաշնորհումը, սեփականության վկայագիրն ու նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու» պահանջով:

Ժողդատարանի կողմից փորձեր են կատարվում հայցի կարգավորման համար, սակայն մեղադրվող կողմի անկոտրում համառության պայմաններում գործի քննարկումը ձգվում է մի ամբողջ տարի: Մեղադրվողներ հայր եւ դուստր Տիգրան եւ Նարինե Մելքոնյանները փորձում են հերթականորեն դատարան չներկայանալ, օգտվելով դատարանի բարյացակամ վերաբերմունքից: Ի վերջո, պատճառները սպառած չինելով, մայիսի 26-ին ժողդատարան են ներկայանում մի նոր հնարքով: Մեղադրյալ Տիգրան Մելքոնյանը «բացարկ» է հայտարարում ժողդատավորի՝ Է. Ավետիսյանի, ժողդատարանի եւ շրջանի դատախազության դեմ՝ մի այլ դատարան գործը տեղափոխելու պահանջով: Ժողդատավորն էլ (առանց դատախազության ներկայացուցչի մասնակցության նիստը բացված էր հայտարարել) առանց հարգելու դատախազության վերադասված իրավունքները պետական շահերի պաշտպանության գործում, հետ ու հանգիստ ընդունում է «բացարկը»:

Որո՞նք են եղել «բացարկի» տոն տվող պատճառները: Իբր թե քաղաքաթեթարանի համակարգում աշխատում է Լաերտ Խաչատրյան անունով մի պատգամավոր, որը հայտնի է եղել, որ ժողդատավորի՝ Է. Ավետիսյանի բարեկամն է եւ հետեւաբար վերջինս «չի կարող օբյեկտիվ լուծում տալ քաղաքաթեթարանի կողմից ներկայացված հայցին (թե կեղծ փաստաթղթի առկայությունը պիտի կասկանդե՞ր ժողդատավորին), եւ երկրորդ պատճառը շրջդատախազության վճռաբեկ բողոքն է եղել ժողդատարանի անհիմն, անհեթեթ, անարդար «որոշումը» բեկանելու գործում: Այդպիսով անհասկանալի էր դառնում նաեւ դատախազության դերը պետական գույքի հափշտակության նկատմամբ եւ շրջդատախազությունը մեղադրվում է պետության շահերը պաշտպանելու դերով հանդես գալու մե՞ջ եւ ժողդատավորը ընդունո՞ւմ է «բացարկը»: Արդարեւ մտածելու տեղիք է տալիս այս ասպետական կեցվածքը:

Իսկ եթե հետեւած լինենք դեպքերի ծավալմանը, երկու տարբեր բեւեռների կարվեն մտքերը: Այսպես, կեղծիքի պատճառով բոնի ուժով հեռացված քաղաքացիների (որոնք դուրս են շրտվել զեղծարարների կողմից՝ նույնիսկ մարմնական վնասվածքներ ստանալով) անկոտրում հետեւողականության պատճառով ՀՀ արդարադատության նախարարության կողմից տարվել են ստուգումներ, եւ հաստատվել են ժողդատարանի կողմից կատարված խախտումները: Մեկ տարի անցնելուց հետո էլ տուժող քաղաքացիները կրկին դիմում են արդարադատության նախարարություն՝ այս անգամ բողոքի ձայնով, վերանորոգելու համար ժողդատարանում դեռ անհետեւանք ու անպատասխան մնացած դիմումների ճակատագրի հարցը: Նման պայմաններում, երբ տուժող քաղաքացիները հանդես են գալիս ժողդատարանի նախագահին պատասխանատվության ենթարկելու կոչերով, եւ երբ ժողդատարանի նախագահ Մ. Կասվալյանի ընդունած անհիմն «որոշումը» բեկանվել է ոչ թե շրջդատախազության «վճռաբեկ բողոքով», այլ ՀՀ դատախազության «հսկողական բողոքով», մի՞թե ավելի համոզված չենք լինի հայտարարված «բացարկի» շինծու լինելու փաստի մասին: Ավելին, ասենք, որ թաղամասերանի հայցը ժողդատարան է ներկայացվել ՀՀ դատախազության գլավոր թելադրանքով, որը հավաստիք է նաեւ կեղծիքի նկատմամբ ՀՀ դատախազության հետեւողական լինելուն:

Տարօրինակ չէ՞ր լինի, եթե մեկ քաղաքի տարբեր տարածություններում պետական գույքի նկատմամբ գործող օրենքները տարբեր ձեւերով ընկալվեին, եւ ՀՀ դատախազության ֆունկցիաներն էլ տարանջատվեին ըստ տարածաշրջանների դատախազությունների հայեցողության:

Հարցեր, որոնք նույնպես արժանի են համապատասխան մարմինների նկատառությանն ու գնահատականին:

ՀՐԱՉ ԽՈՆԿԻՆՅԱՆ

Հայաստան-Սիրիա ընկերության փոխնախագահ

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ

Սփյուռքը մե՞զ է նայում

Ակնկալվում են նոր հարաբերություններ

Ստորեւ ներկա համարով, բացում ենք Հայաստան-Սփյուռք հարաբերություններին նվիրված մեր թղթածրարը: Սկզբում՝ տարբեր մասնագետների ու գործիչների հետ հարցազրույցով, այնուհետեւ մեր եւ այլոց մեկնաբանություններով կփորձենք գնահատել առկա վիճակը եւ ապա առաջարկություններ անել այդ հարաբերությունների ցանկալի ու հնարավոր ծավալների, էության եւ մեխանիզմների մասին: Հարցը հատկապես կարեւոր է այս պահին, քանզի, ինչպես տեղեկանում ենք, ՀՀ նոր իշխանությունը այս օրերին փորձում է համապատասխան ձեւ ու բնույթ տալ ազգային միասնության համար այս կարեւորագույն խնդրին:

Եթե նկատի առնենք, որ Հայաստանի երրորդ Հանրապետությունն այդպես էլ սփյուռքի հարցում պետական քաղաքականություն չիրականացրեց (թեեւ սա էլ քաղաքականություն է), ապա կարելի է ասել, որ նոր նախագահի եւ կառավարության պարագայում սփյուռքի հետ հարաբերություններն սկսվելու են գրեթե զրոյից:

Թե «Հայաստան» հիմնադրամը, որն ըստ էության ֆինանսական գործառույթներ ուներ, թե մշակույթի կամ այլ ոլորտներում սահմանափակ օփումները եւ թե սփյուռքահայ կուսակցական գործիչների հետ անհասական կամ խմբային հարաբերությունները հեռու են որպես Հայաստան-սփյուռք համակարգված կամ մոդելային հարաբերություններ դիտվելուց: Այնպես, ինչպես ազգային միասնության մասին մեր քաղաքական գործիչների հայտարարություններն են հեռու իրականություն լինելուց: Ազգային միասնությունը ամենեւին էլ դեկլարատիվ հասկացություն չէ, եւ նրա մասին ոչ թե խոսում են (առավել եւս հայտարարում), այլ պարզապես ստեղծում են: Եթե վերջինս իրողություն լիներ, ապա կլիներ բավական ակնառու, որպեսզի կարիք չզգացվեր այդ մասին հայտարարելու:

Ամենեւին էլ չուրանալով ավանդական կուսակցությունների լրջագույն դերը սփյուռքահայության ազգային ինքնագիտակցությունը պահպանելու եւ հնարավոր ուծացման վտանգին դիմակայելու գործում, այսուհանդերձ կարծում ենք, որ ՀՀ նախագահի ընտրությունների ֆոնի վրա ՀՅԴ-ի, ՌԱԿ-ի եւ մյուս ոչ ավանդական որոշ կուսակցությունների ձեռք բերած համաձայնությունը, հիրավի, կարեւոր փաստ է, սակայն բավարար չէ ազգային միասնությունը կայացած հռչակելու համար: Ցանկալին իրականի տեղ մատուցելը նպատակահարմար չէ այնքանով, որ կարող է արգելակել Հայաստան-սփյուռք փոխադարձ ճանաչման, արդյունքում ազգային միասնության գործնական ուղիների որոնումը: Իսկ իրական պատկերը հետեւյալն է. կան առանձին բեւեռներ հիշեցնող հայ ազգի հատվածական խմբեր, որոնց բաժանում է ոչ միայն տարածային հեռավորությունը, այլ նաեւ քաղաքակրթական, մշակութային, կենցաղային խիստ տարբեր միջավայրերը: Եվ, որ էական է, այլ են նաեւ ազգային գերխնդիրների նկատմամբ մոտեցումները, այստեղ առայժմ փոխըմբռնումը պակասում է: Այսպես, սփյուռքահայը խարազանում է հայաստանցուն՝ արտաբերված յուրաքանչյուր ռուսերեն բառի համար՝ չցանկանալով ընդունել խորհրդային Հայաստանի եւ դրանից առաջվա՝ շուրջ 150 տարվա իրողությունը. ՀՀ քաղաքացու համար հասկանալի, բայց անընդունելի է սփյուռքահայի ասելությամբ լի վերաբերմունքն, ասենք, թուրքական արտադրության ապրանքի հանդեպ: Ի դեպ, եթե փորձենք առաջնորդվել դաշնակցության «Մեկ ազգ, մեկ հայրենիք» կարգախոսով եւ Հայաստանում տեղայնացնենք առավելապես այս կուսակցության ներկայացուցիչներին բնորոշ թուրքատյացության նման դրսեւորումները, ապա առնվազն անհասկանալի է, թե ինչպես ենք այն համատեղելու, ասենք, անմիջական հարեւանների հետ ՀՀ-ի հարաբերությունների անհրաժեշտության խնդրին:

Հազիվ թե վերջինիս կարեւորությունը որեւէ մեկը լրջորեն հերքի: Ի վերջո, այս հակասությունները պարզ ձեւակերպում ունեն. ՀՀ քաղաքացու համար ակնհայտորեն առաջնահերթը Հայաստանի Հանրապետության անկախության եւ տարածային ամբողջականության պահպանումն է, իսկ յուրաքանչյուր սփյուռքահայի համար նախեւառաջ Հայ դատը եւ պատմական արդարության վերահաստատումը: Այսուհանդերձ, կարծում ենք, որ ազգային խնդիրների ընկալման տարբերությունների վրա պետք չէ ողբերգություն կառուցել: Սակայն դրանք շրջանցելով ազգային միասնության շատողական ու ցուցադրական կեցվածք ընդունելը նույնպես նպատակահարմար չէ: Անհրաժեշտ է Հայաստան-սփյուռք հարաբերությունների կայացման համար նախեւառաջ հստակեցնել այդ գործընթացում յուրաքանչյուրի դերը, փոխադարձ պարտավորությունները եւ պահանջները:

Վերջնական արդյունքում այս խնդիրները կարգավորում են քաղաքական գործիչները: Իսկ սկզբի համար, կարծում ենք, արժե տեղյակ լինել Հայաստան-սփյուռք հարաբերությունների ձեւավորման որոշ գիտական տեսակետների՝ պարզելու համար, թե ի վերջո մեզ՝ հայերիս, անհրաժեշտ է ինքնանպատակ միասնությո՞ւն, թե՞ ինքնուրույն, նպատակային գործունեություն՝ փոխպայմանավորվածության հիմունքներով, եւ կա՞ն արդյոք այս հարաբերությունների կարգավորման ունիվերսալ մեխանիզմներ կամ մոդելներ:

«Կյանքի ռիթմի սինխրոնիզացիա»

Ստորեւ ներկայացնում ենք ԵՊՀ ազգագրության ամբիոնի վարիչ Հրանուշ Խառատյանի հետ մեր զրույցից որոշ հատվածներ: Նշենք, որ տկն Խառատյանը նախկինում գլխավոր մասնագետի պաշտոն է վարել ՀՀ նախագահի աշխատակազմում, ուստի ազգային խնդիրներին, մասամբ եւ սփյուռքի հետ հարաբերություններին առնչվել է նաեւ այդ մակարդակում: Ինչպես իրեն է ասում. «Այդ շրջանում հստակ ձեւավորվեց մի գաղափար, որը, ցավոք, իրողություն չդարձավ»:

Ո՞րն է այդ գաղափարը

Տիկին Խառատյանը մեկնաբանում է. «Հայկական բոլոր գաղթօջախները, ՀՀ-ն եւ առհասարակ հայկական բոլոր կառույցները ձեւավորում են պատգամավորական հիմունքներով գործող Համահայկական կենտրոն (կամ մշտապես գործող համագումար), որը զուտ ազգային կառույց է, վեր է կուսակցական կրքերից եւ քաղաքական նկրտումներից: Կենտրոնի գոյությունը գերադասելի է Հայաստանից դուրս, որպեսզի պետական վերահսկողության տակ չդրվի. սա նաեւ վերպետական կառույց է: Քաղաքական առումով այն չեզոք է, միսված չէ հայ ժողովրդի ներքին քաղաքական կյանքի կարգավորմանը, այլ՝ առհասարակ հայ ազգի գոյատեւման ապահովմանը: Անհրաժեշտության դեպքում գերազգային այս կառույցը կարող է օգնության ձեռք մեկնել նաեւ պետությանը: Չունենալով ՀՀ-ի քաղաքական խնդիրների լուծման իրավասություն՝ Համահայկական կենտրոնը կարող է լինել մի կառույց, որն ի զորու է առավել ճկուն պատասխանելու նաեւ Հայ դատի շահերը: Կրկնում եմ՝ խնդիրը քաղաքականացված չէ»:

Զանգերը թող դողանջեն նույն ժամին, բայց չգուժեն

Կամ՝ կյանքի ռիթմի սինխրոնիզացիա: Հրանուշ Խառատյանի առաջարկած այս մոդելի էությունը հետեւյալն է: Յուրաքանչյուր հայ, աշխարհի որ երկրում էլ լինի եւ որքան էլ ինտեգրացված լինի տվյալ երկրի ներքին կյանքին, տարվա որոշակի օրեր նվիրում է կյանքի համահայկական ռիթմի ապահովմանը: Տարեկան ցիկլի մեջ բոլոր հայերը պարբերաբար նշում են այս կամ այն ազգային տոնը, կամ իրադարձությունը սինխրոն կերպով, այսինքն՝ նույն օրը, նույն արարողակարգով, նմանատիպ այցելություններով, նվերներով եւ այլն: Սրա նախատիպը ապրիլի 24-ն է, որը ողջ հայության համար որոշակիորեն ծիսականացված եւ ընդհանուր հուզականություն կրող երեւույթ է:

Ի դեպ, առաջարկվող օրերի օրթան, ինչպես նշում է տկն Խառատյանը, բնավ պարտադիր չէ, որ ստեղծված լինի պատմական ցավագին երեւույթներից: Այսպիսով՝ կյանքի ռիթմի սինխրոնիզացիան ստեղծում է յուրօրինակ ազգային կենսատիպ, որի նպատակը հայերի բոլոր հատվածները կարող ընդհանուր հուզականության ալիքի ապահովումն է:

«Այն կօգնի պարբերաբար արթնացնելու հայերի պատմական հիշողությունը: Ազգի գոյատեւման կարեւորագույն պայմաններից է սա», եզրափակում է Հրանուշ Խառատյանը:

Այն, ինչը Հրանուշ Խառատյանի կարծիքով փասս է

Մեր այն հարցին՝ հայաստանաբնակ հայերն ու սփյուռքահայերը զուտ բարոյական առումով ունե՞ն փոխադարձ պարտավորություններ կամ պահանջներ, եւ ինչպիսի՞ն են իր պատկերացումները տարաբնույթ հայերի փոխհարաբերությունների եւ հանդուրժողականության խնդրի շուրջ, տկն Խառատյանն այսպես պատասխանեց. «Հայերենում «ազգ» բառն ունի առնվազն երկու ստուգաբանություն. ազգ՝ ժողովուրդ (էթնոս) իմաստով, եւ ազգ՝ որպես արյունակից ազգականների խումբ (այստեղից՝ «ազգանուն» բառը): Մեր ժողովուրդն իր ազգային պատկանելության ներքին ըմբռնումով մոտ է երկրորդին, այսինքն ընկալում է իրեն որպես արյունակից ազգականների խոշոր մի խումբ: Մի պարզագույն օրինակ. օտար երկրում գտնվող հայը, երբ նեղն է ընկնում, փնտրում է նախեւառաջ մի որեւէ, թեկուզ պատահական հայ մարդու, որն օգնության ձեռք կարող է մեկնել իրեն:

Այստեղ էական չէ՝ այդ հայը գյումրեցի է, հայաստանցի... հայ լինի: Անշուշտ, սա բացարձակ տարածում գտած երեւույթ չէ, սակայն հիմնական զանգվածն այսպիսի վարքագիծ ունի: Ձեր հարցադրումն այս պարագայում երկրորդական է: Իրականում մեր ազգի ներսում արդեն գործում է համակարգ, որը մոտ է ազգակցական համակարգին: Իսկ ազգականների միջեւ միշտ էլ փոխադարձ պարտավորվածություն կա»:

ՆԱՆԵ ՄԱԿՈՒՅԱՆ

Գիտաժողով Գյումրիում՝ նվիրված ակադեմիկոս Արմենակ Նազարովի ծննդյան 90-ամյակին



Հունիսի առաջին օրերին Գյումրիում անցկացվեց եռօրյա նստաշրջան՝ նվիրված ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտի հիմնադիր, ակադեմիկոս Արմենակ Նազարովի ծննդյան 90-ամյակին: Գիտաժողովը սկսվեց հանդիսավոր նիստով, որտեղ խոսվեց ականավոր գիտնականի անցած ուղու, նրա վաստակի ու գիտությանը մատուցած ծառայությունների մասին:

Արմենակ Գեւորգի Նազարովը ծնվել է 1908 թվականին Փարիզում: 1932-ին ավարտել է Թիֆլիսի ինդուստրիալ ինստիտուտը, որից 5 տարի անց շինարարական մեխանիկայի եւ երկրաշարժակայուն շինարարության բնագավառում կատարած ինքնատիպ գիտահետազոտական աշխատանքների համար, նրան առանց դիսերտացիայի պաշտպանության շնորհվել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան եւ պրոֆեսորի կոչում: 1945-ին պաշտպանել է դոկտորական թեզ, որով առաջարկել է կառուցվածքների վրա սեյսմիկ ուժերի ազդեցության որոշման նոր մեթոդ: 1946-61 թթ. աշխատել է շինանյութերի եւ կառուցվածքների հայկական գիտահետազոտական ինստիտուտում՝ նախ տնօրենի գիտական գծով տեղակալ, ապա տնօրեն, միաժամանակ դասավանդելով երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1960-ին ընտրվել է Հայաստանի ԳԱ ակադեմիկոս: Այդ ժամանակ արդեն միջազգային ճանաչում ունեցող գիտնականի նախաձեռնությամբ ու ջանքերով 1961 թվականին Լենինականում (Գյումրի) հիմնվում է ԳԱ երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտը, որը եւս նրա ղեկավարությամբ շուտով ճանաչվում է գիտական աշխարհում: Ա. Նազարովն այս ինստիտուտի տնօրենն է եղել 1961-69, 1971-73 եւ 1978-81 թվականներին: 1981-83 թթ.-ին ՀՀ ԳԱ երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն էր: Եղել է նախկին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահությանն առընթեր երկրաշարժաբանության եւ սեյսմակայուն շինարարության միջգերատեսչական խորհրդի բյուրոյի անդամ, Կովկասի սեկցիայի նախագահ:

Ակադեմիկոս Նազարովի մեծաթիվ գիտական աշխատությունները, որ վերաբերում են շինարարական մեխանիկայի, կառույցների սեյսմակայունության, ինժեներային սեյսմոլոգիայի, կիրառական մեխանիկայի, երկրաֆիզիկայի հարցերին, հրատարակվել են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Չինաստանում, Ճապոնիայում: Գիտության այս բնագավառների հիմնարար խնդիրներին նվիրված նրա զեկուցումները ներկայացվել են բազմաթիվ միջազգային գիտաժողովներում (Մադրիդ, Տոկիո, Լոնդոն, Հռոմ, Սան-Բուլ): Մեծ է Ա. Նազարովի վաստակը միաժամանակ գիտական կադրերի աճեցման գործում, նրա ղեկավարությամբ պատրաստվել են գիտության 40 դոկտորներ ու թեկնածուներ: Ականավոր գիտնականն ու հմուտ կազմակերպիչը զբաղվել է նաեւ բնապահպանության, գիտատեխնիկական առաջընթացի, տարերային աղետների դեմ պայքարի հիմնահարցերով:

Գյումրիում անցկացված ներկա գիտաժողովը, որ կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ֆիզիկամաթեմատիկական եւ տեխնիկական գիտությունների բաժանմունքը, երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտը, ներառեց երկրի ֆիզիկայի ու երկրաշարժաբանության հիմնարար եւ հրատապ խնդիրներ: Դրանց վերաբերյալ զեկուցումները, որ ներկայացվեցին լիագումար եւ սեկցիոն նիստերում, ընդգրկում էին չորս հիմնական ուղղությունների՝ ինժեներային սեյսմոլոգիա եւ երկրաշարժակայուն շինարարություն, սեյսմիկ ռիսկ եւ երկրաշարժերի կանխատեսում, երկրի խորքային կառուցվածքի ուսումնասիրություն, հետախուզական երկրաֆիզիկա: Մի շարք զեկուցումներում արտացոլված են Սպիտակի երկրաշարժի դասերը:

Բնագավառի հայաստանյան գիտական ընտրանուց բացի գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին նաեւ չորս առաջատար գիտական մասնագետներ Վրաստանից: Նախատեսվում էր զեկուցումների չորսօրյա միջազգային ծրագիր, սակայն Ռուսաստանից, Ուկրաինայից, Ուզբեկստանից, Թուրքիայից մասնակցության հայտ ներկայացրած գիտնականներն ինչ-ինչ պատճառներով չէին ժամանել Գյումրի:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

«Սիրիայի մեջքը քոր է գալիս»

Գրում է թուրքական թերթը

Ֆրանսիայի ԱԺ-ի հայերի ցեղասպանության ճանաչման որոշմանը Թուրքիան շատ հիվանդագին արձագանքեց: Բայց եւ այնպես, նա խուսափեց ծայրահեղություններից: Թուրքական հարձակումներից, որոնք հակազդեցության դրսեւորումներ էին, Ֆրանսիայի կողմին իր բաժինը ստացավ Հայաստանը: Թուրքիայի ղեկավարությունը Ֆրանսիայի ԱԺ-ի որոշումը պայմանավորեց Հայաստանում իշխանության հերթափոխով ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր հանրապետության, հայկական իշխանությունների, առավել եւս նորընտիր նախագահի վրա ճնշում բանեցնելու դրսեւորում: Թեեւ փորձ է արվում ճնշում բանեցնել նաեւ Ֆրանսիայի վրա, սակայն դրան դիմադրելու վերջինի հնարավորությունները Հայաստանի համեմատ, ինչ խոսք, գերադասելի են: Սա թե ինչու ճնշում բանեցնելու դրսեւորումով Թուրքիան հերթական անգամ իր անբարյացակամ վերաբերմունքն է դրսեւորում Հայաստանի նկատմամբ: Առհասարակ Թուրքիան անհանդուրժողական վերաբերմունք ունի հարեւան երկրների հարցում: Դա ըստ երեւույթին բացատրվում է Թուրքիայի եւ նրա հարեւանների տարաբնույթ խնդիրների առկայությամբ: Դրանց շարքում կարելի է դասել էգեյան ծովի եւ Կիպրոսի խնդիրները՝ Հունաստանի, Ղարաբաղյան հիմնահարցն ու Հայ դատը՝ Հայաստանի, Մոսուլինը՝ Իրաքի, Ալեքսանդրեթի սանջակինը՝ Սիրիայի հետ:

Սրանք ոչ միայն ժամանակ առ ժամանակ սրում են Թուրքիայի հարաբերությունները հարեւան երկրների հետ, այլեւ լուրջ հակասությունների պատճառ են դառնում: Առկա խնդիրների շահարկումը միջազգային ուժերի կողմից հակասություններն առանձնակի սրում եւ դրանց հաղորդում է խորնիկ բնույթ: Այս բնորոշումն առավելապես վերաբերում է թուրք-սիրիական հարաբերություններին:

Ինչպես հայտնի է, Ալեքսանդրեթի սանջակը 1939 թ. եվրոպական մեծ տերությունների, հատկապես Ֆրանսիայի օրհնությամբ, Սիրիայից անջատվեց եւ կցվեց Թուրքիային: Թուրքերն այնուհետեւ դա վերանվանեցին Հաթայի վիլայեթ: Այդ վիլայեթը ժամանակի ընթացքում վերածվեց մշտական գործոնի թուրք-սիրիական փոխհարաբերություններում՝ պայմանավորելով դրանց ընթացքը: Շուտով երկու երկրների միջեւ ծագեց ջրի խնդիրը: Հարավարեւելյան Անատոլիայի նախագիծն առանձնակի սրություն հաղորդեց այս խնդրին: Նախագծի կենսագործման պայմաններում Թուրքիան սկսեց հետզհետե կրճատել Սիրիային հասանելիք ջրի ծավալները, որ տրամադրվում է Եփրատից: Ի պատասխան ջրի ծավալներն ավելի քան կիսով չափ կրճատելու Դամասկոսի մեղադրանքներին Անկարան պատասխանեց Քրդստանի աշխատավորական կուսակցության՝ ՊԿԿ-ի ահաբեկչական գործունեությունն ընդդեմ Թուրքիայի հովանավորելու մեղադրանքով:

Այսպիսով ջրի խնդրի հետ թուրք-սրրիական փոխհարաբերություններում, որպես լարվածության մշտական գործոն ի հայտ եկավ նաեւ ՊԿԿ-ն ու նրա «ահաբեկչական գործունեությունը»: Եթե այս ամենին գումարելու լինենք այն, որ Թուրքիան տարածաշրջանում հանդես է գալիս ԱՄՆ լիազոր-ներկայացուցչի դերում, իսկ Սիրիան առաջնակարգ տեղ է զբաղեցնում «ահաբեկչության աջակցող երկրների» ամերիկյան ցուցակում, կարծում ենք, պատկերն ամբողջական է դառնում: Այս ամենի առումով պատահական չեն թուրք-սիրիական փոխհարաբերությունների լարվածությունը, փոխադարձ մեղադրանքներն ու Սիրիայի պահանջներին Թուրքիայի ծայրահեղ հակազդեցությունը, որ թուրքական մամուլի էջերում հաճախ սանձարձակությամբ է արտացոլվում: Որպես սանձարձակության բնորոշ օրինակ կարելի է ներկայացնել Ահմեդ Փերթեւի «Սիրիայի մեջքը քոր է գալիս» խորագրով հոդվածը:

Դա օրերս լույս է տեսել «Հյուրրիյեթում»: Հոդվածի հեղինակը մասնավորապես գրում է. «Ոմանք ծեծ ուտելու գիժ են: Մշտապես փորվում են, որ ջարդուխուրդ լինեն: Մի ժամանակ այդպիսին էր Հունաստանը, իսկ հիմա դրան Սիրիան է միացել: Ինչ է, թե Հաթայն ենք ուզում: Ըստ երեւույթին հիմար արաբի արյունը պղտորվել է: Երբ ողջ աշխարհը Սիրիային գիտի որպես ահաբեկչական պետության, Վաշինգտոնում դրա դեսպանը վեր է կենում եւ արաբական հեռուստատեսությամբ ամբարտավանորեն հայտարարում է. «Բոլորովին չենք մոռացել Հաթայը, որ Սիրիայի վիլայեթն է: Սեզանից գողացան: Բայց Գոլանի բարձունքները վերցնելուց հետո հերթը դեռ Հաթային է գալու»: Հետաքրքրական է, թե ո՞վ է գողացել, ի՞նչ գողանալ: Այ ընկեր, դու կամ ծեծ չես կերել, կամ էլ անտեղյակ ես պատմությունից: Ի դեպ, Հաթայը ձեր ուժերից վեր է, վերցնել չեք կարող: Չեք կարողացել ձեր 100 տարվա հարեւանին ճանաչել: Առ այսօր չգիտեք, որ Թուրքիան ոչ մեկին նույնիսկ խճաքար չի տալու: Բավ է, ձեր ծոցում տաքացնեք ՊԿԿ-ին: Համբերության բաժակն արդեն լցվել է: Թուրքական զորքերը կազմ-պատրաստ հարավ-արեւելքում են: Չե՞ք ուզում, որ մինչ զորանոցները ցրվելը ձեր կողմերն էլ հանդիպեն: 10 տարի առաջ ձեր մեջքին Ռուսաստանն էր կանգնած, դե լավ, հիմա ո՞ւմ հույսին եք: Երեւի մոռանում եք, որ ձեր ջուրն անգամ մենք ենք տալիս: Փառք տվեք Աստծուն, որ Թուրքիան ղեկավարում են բարեխիղճ մարդիկ: Հակառակ դեպքում, առանց ջրի սատկելու էիք»:

Ահմեդ Փերթեւի այս տողերը սոսկ սանձարձակություններ չեն: Դրանք արտացոլում են Սիրիայի նկատմամբ Թուրքիայի ղեկավարության անբարյացակամ վերաբերմունքը: Ինչ խոսք, Սիրիան նույնպես այն կշիռը չունի, ինչ Ֆրանսիան: Բայց Թուրքիայի հարեւանն արժանանում է անբարյացակամ վերաբերմունքի, ինչպես Հայաստանը:

ՀԱԿՈԲ ՕՇԱԲՐՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

Ինչպես է հարստացել Բերեզովսկին

Մոսկվայում շատ են խոսում ֆինանսիստ Բորիս Բերեզովսկու կասկածելի անցյալի մասին, որը Կրեմլի գաղտնի խորհրդականն է եւ վերջերս նախագահ Բորիս Ելցինի կողմից նշանակվեց ԱՊՀ գործադիր քարտուղար: Նրա հարստությունը կուտակվել է նախկին ԽՍՀՄ-ի ավերակների վրա: Բայց քչերը գիտեն, որ ռուսական օլիգարխիայի ներկայացուցիչը հարստացել է Տոլյատիում:

1986 թ. Բորիս Բերեզովսկին երիտասարդ եւ փայլուն մաթեմատիկոս էր, գիտությունների դոկտոր, «Ավտովազ» գործարանի նոր տնօրեն: Վլադիմիր Կադաննիկովը (որն այսօր էլ իր պաշտոնին է) եւ նրա տեղակալ Ալեքսանդր Չիբորեւը Բերեզովսկուն գործարան հրավիրեցին «Ավտովազի» զարգացման նպատակահարմար ռազմավարություն մշակելու համար: Մի քանի տարի ամեն ինչ հանգիստ էր, բայց 1992 թ. վարչապետ եգոր Գայդարի տնտեսական ցնցաբուժության սկզբնավորումը երիտասարդ հետազոտող Բերեզովսկուն հնարավորություն ընձեռեց իրեն փայլուն դրսեւորել գործարարության ասպարեզում՝ «Ավտովազը» ծառայեցնելով իր անձնական բարեկեցությանը: Հիմնելով «Լոգովազ» վաճառահանման ընկերությունը, նա կարողացավ գործարանի տնօրենությանը համոզել, որ իրեն բացառիկ պայմաններ տրամադրեն արտադրանքի վաճառահանումն ապահովելու համար: «Լոգովազի» կառավարման խորհրդում Կադաննիկովի եւ Չիբորեւի ներկայությունը դյուրացնում էր նրա գործը:

«Լոգովազը» ավտոմեքենաները գնում էր ընդամենը 4500 դոլարով եւ վերավաճառում 7000 դոլարով՝ գումարը մուծելով ապրանքի հանձնումից 2,5 տարի անց: Սղաթը, որն այն ժամանակ կազմում էր 1000 տոկոս, Բերեզովսկուն թույլ տվեց վաճառվող երկու ավտոմեքենայից մեկը փաստորեն ձրի ձեռք բերել: Բացի դրանից, արտասահմանում նա վայելում էր «Լադաների» վաճառահանման մենաշնորհը: Այդ ավտոմեքենաները, որոնք Արեւմուտքում կարծես թե էժան էին վաճառվում, իրականում կրկին ներմուծվում էին Ռուսաստան եւ վաճառվում սպեկուլյատիվ գներով:

Իշխանության կուլիսներում հմտորեն գործող նախկին մաթեմատիկոսը նաեւ դարձավ Կրեմլում ավտոգործարանի արտոնյալ միջնորդը, մինչեւ որ, ի վերջո, «Ավտովազի» ղեկավարները «հասկացան, որ նա չափազանց անկուշտ է եւ գժտվեցին նրա հետ», պարզաբանում է ռուսաստանցի լրագրողներից մեկը: Վերջինիս կարծիքով, դրանից տուժել են հենց իրենք՝ գործարանի ղեկավարները: Լինելով խորհրդային շրջանի ամենազոր «կարմիր» տնօրեններ, նրանք, այնուամենայնիվ, ժամանակին չէին ըմբռնել, որ նորահայտ ֆինանսիստներն ազդեցությամբ լայնորեն գերազանցում են իրենց:

Ի դեպ, Տոլյատիում դիտորդներից շատերը համոզված են, որ Բերեզովսկին որոշակի դեր է խաղացել «Ավտովազի» մաֆիաների հանդեպ Մոսկվայի հետաքրքրության ուժեղացման գործում: Նրանց կարծիքով, «Բերյոզ» մականունով Բորիս Բերեզովսկին մի օր կարող է կրկին հայտնվել Վոլգայի ափերին:

«ԴԻԳՍՐՈ»

Գերմանացիները սկսել են մարկից պարարտանյութ պատրաստել

Նոր համաեվրոպական դրամարժույթի կիրառման ժամկետը մոտենում է եւ եվրամիության տարբեր երկրներում մտահոգություն է տիրում, թե ինչ կարելի է անել ներկայումս շրջանառության մեջ գտնվող ազգային թղթադրամների վիթխարի քանակությունը: Խնայող գերմանացիները մասնակիորեն գտել են ելք: Բեմենում գործող թափոնների օգտահանման ֆիրման առաջարկել է հին փողերն օգտագործել դրանք պարարտանյութ դարձնելով: Ինչպես պնդում են, փորձերը խիստ դրական արդյունքներ են տվել: Բանկերը ֆիրմային մատակարարել են մաքր կտրատված թղթադրամներ: Դրանք խառնել են կարտոֆիլի կեղեւների, սուրճի քուսպի եւ խոհանոցային այլ թափոնների հետ, եւ այդ խառնուրդից պատրաստել այգու եւ բանջարանոցի պարարտանյութ: Սակայն ֆիրմայում օգտագործվել են միայն 10, 20 եւ 50 մարկանոց թղթադրամները, որոնք համարվում են էկոլոգիապես առավել մաքուր: Առայժմ հայտնի չէ, թե գերմանացիների փորձը կօգտագործե՞ն եվրամիության մյուս երկրները:

«ԻԶՎԵՍՏԻԱ»

Նադիր Խաջիլաեւը խավության նոխազ չի դառնա

Ղարաբաղյան Հանրապետության ներքին լարվածությունը, որն առկա է առնվազն վերջին 4 տարիների ընթացքում, այսօր արդեն դուրս է եկել վերլուծական մակերեւույթ, չսահմանափակվելով (ինչպես նախկինում) սոսկ ահաբեկչական գործողությունների չոր արձանագրմամբ: Ներկայումս արդեն փորձ է արվում խորապես հասկանալու եւ պարզաբանելու ընթացիկ իրադարձությունները, որոնց ակունքները տանում են 1994-ը՝ երբ դեռ Կովկասի ազգությունների կոնֆեդերացիան բավականին ամուր քաղաքական կառույց էր: Այսօր գաղտնիք չէ, որ «դաղստանյան իրադարձությունները» քաղաքական բնույթի էին, այլ ոչ թե (ինչպես ներկայացվում էր) կլանային պայքարի դրսեւորում:

Ծայրաստիճան լարված ներքաղաքական իրավիճակը, որը երեսկան միջադեպերի փուլից «թեւակոխեց» քաղաքական ասպարեզ, ներկայումս կապվում է ՌԴ Պետդումայի պատգամավոր, ՌԴ մահմեդականների միության նախագահ Նադիր Խաջիլաեւի հետ: Մարդ, որը երկու շաբաթ որոնվում էր թե Չեչնիայում, թե Դաղստանում եւ թե Մոսկվայում, բայց չէր գտնվում: Վերջին օրերին նա ինքնակամ ներկայացավ «Օխոտնի Ռյադ», հարկ համարելով խորհրդարանի պատգամավորներին տալ սեփական մեկնաբանություններ:

Օգտվելով առիթից, կուզենք «Ազգի» ընթերցողին փոքր-ինչ ծանոթացնել Նադիր Խաջիլաեւի հետ, քանզի ունեցել ենք հանդիպումներ (հենց իր դրյակում՝ Մախաչկալայում) ճիշտ այն ժամանակ, երբ Ալեքսանդր Լեբեդը (այն ժամանակ ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար) Մախաչկալայում էր, որտեղից ուղեւորվեց Խասավյուրտ եւ այնուհետ՝ Գրոզնի, վերջ տալով լայնածավալ պատերազմական գործողություններին:

Ինչպես ամեն մի կնճահայր, Նադիր Խաջիլաեւը հյուրասեր անձնավորություն է: Հինգ տարի շարունակ նա անբեկանելի հեղինակություն է Հյուսիսային Կովկասի ողջ ենթաշրջանում: Նրա անձնական կարերը ձգվում են մինչեւ Լոս Անջելես եւ Մելբուռն: Նա մեծ դեր է ունեցել Ալեքսանդր Լեբեդի՝ Մախաչկալա ժամանելու գործում: Նադիր Խաջիլաեւը Ալեքսանդր Լեբեդի ընկերն է: Նրան է պատկանում նաեւ «Կովկասյան տան» գաղափարը: Ժամանակին, երբ փոքր-ինչ անկում ապրեցին Շանիբովի դիրքերը (1992-ից նա Կովկասի ազգությունների կոնֆեդերացիայի նախագահն էր), Նադիր Խաջիլաեւը գիտակցելով, որ կոնֆեդերացիան որպես գործող քաղաքական կառույց հեռանկար չունի, ինքը փորձեց ստեղծել մի նոր կազմակերպություն՝ «Կովկասյան տուն» պայմանական անվամբ: Սրա մասին նա տեղեկացրեց նաեւ Ադրբեջանի, Վրաստանի եւ Հայաստանի նախագահներին եւ, իր իսկ հավաստմամբ, սոսկ Լեւոն Տեր-Պետրոսյանը անտարբեր լռությամբ փաստորեն չարձագանքեց նման նախաձեռնությանը: Մեր կարծիքով, դա ճիշտ քայլ էր:

Այնուհետեւ (1995-1996-ին) Մոսկվային հաջողվեց մասնատել կոնֆեդերացիան, դարձնել քաղաքական միջոց նախագահ «նշանակելով» Հյուսիսային Կովկասի առաջնորդների կողմից «փառազրկված» Յուսուֆ Սասլամբեկովին: Այս գործողությունը լրացուցիչ հնարավորություններ ընձեռեց Նադիր (մեկ-մեկ նաեւ Նադիրշահ) Խաջիլաեւին, եւ նա իր նպատակների իրականացման համար հիմնեց «ՌԴ մահմեդականների միություն» կազմակերպությունը: Ըստ էության սա քող է, որն այնուամենայնիվ հնարավորություն էր տալիս զբաղվելու բազմաբնույթ գործունեությամբ: Համենայն դեպս, ՌԴ մահմեդականների միության իրավիճակի մասին նա որեւէ հստակ խոսք արտասանել չկարողացավ: Տպավորությունն այն էր, որ Նադիր Խաջիլաեւը անհամեմատ հետաքրքրվում կոպատասխաներ թմրաբիզնեսի եւ տարածաշրջանային այլ գործերի հետ առնչվող հարցերին:

Մախաչկալայում Նադիր Խաջիլաեւը իրոք շահ է: Նրա դրյակը արժանի է պալատական պոեզիայի ձոներին:

Հյուսիսային Կովկասի՝ «տեղական ենթակառույցների» ղեկավարների կարծիքով, Նադիր Խաջիլաեւը ընդգծված անհատականություն է եւ երեսկան աշխարհում հայտնի անձնավորություն: Նրա երկու եղբորը սպանել են դաժանաբար:

Այս ամենի մասին պատշաճական Մոսկվան տեղեկացված էր վաղուց: Սակայն տարիներ շարունակ ՌԴ-ն կույր է եղել Նադիր Խաջիլաեւի գործունեության հանդեպ: Նրան այսօր փորձում են դարձնել խավության նոխազ՝ իբր թե նոր բացահայտված հանցագործ, եւ հենց այս հանգամանքն է առավելապես նյարդայնացնում Խաջիլաեւին: Միեւնույն ժամանակ, փաստն այն է, որ Մոսկվային այնքան էլ հետաքրքիր չի լինի Նադիր Խաջիլաեւին հանել քաղաքական ասպարեզից, քանզի նրա ետեւում այսօր Դաղստանում կան հզոր ուժեր, կապված Հյուսիսային Կովկասում գործող այլ խոշոր եւ բազմաթիվ կազմակերպությունների հետ:

ԱՐԻՍ ՂԱՋԻՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Հանուն հայոց լեզվի մաքրության

«Ամոթ նրան, ով սպանում է խոսքը», ասել է Նիցշեն: Այսօր մեզանում բազում առիթներ կան կրկնելու փիլիսոփայի դառնությամբ ու կսկիծով շաղախված այս խոսքը: Եթե փիլիսոփան լիներ մեր ժամանակակիցը եւ իմանար հայերենը, լսեր մեր այսօրվա խոսակցական լեզուն, երեւի չբավարարվեր ամոթանքի տալով, կգտներ մեկ այլ պատժամիջոց նրանց համար, ովքեր իսկապես սպանում են խոսքը: Հիրավի, այսօր մեր գրավոր ու բանավոր խոսքն այնքան է լցված խժալուր, խառնիճաղանջ ելեւէջներով, որ սպառնում է փոշեր հայոց արքայական խոսքի գեղեցկությունն ու բարեհնչյունությունը: Խոսքս չի վերաբերում միայն փողոցի ժարգոնին, ինչին դիմագրավելն անհնարին մի բան է թվում, վերաբերում է հրապարակային, պաշտոնական ամբիոններից լսվող լեզվին, ինչու չէ, նաեւ պարբերական մամուլին, ռադիոյին ու հեռուստատեսությանը, կլոր սեղանի հարցազրույցներին, այլազան շոուներին ու գովազդների անսկիզբ ու անվախճան հորձանին:

Ինքնաթիռ երեւալու մարմաջով բռնված ռադիո, հեռուստատեսության խոսնակներին լսելիս, բառերը հասնում են ականջ, բայց ոչ միտքը: Պատճառը տաղտկալի միապաղաղ արտաբերումն է, բառի երանգավորման, տրամաբանական շեշտի, բառի նյութականացման արվեստի բացակայությունը, ինչպես եւ հասկացությունների շփոթը, բառերի սխալ, ոչ տեղին գործածումը:

Ես կարող էի խոսքը «սպանելու» շատ օրինակներ վկայակոչել, բայց լեզվաբան չեմ եւ այդ օգտակար գործը թողնում եմ լեզվաբաններին: Սակայն չեմ կարող անտարբեր անցնել մի քանի բառերի սխալ կամ անտեղի գործածման փաստի կողքով: Ամենից առավել չարչրկվածը «կողմից» բառն է, առանց որի գրեթե բոլոր հոդեսորներն անխիր չեն պատկերացնում իրենց ասելիքը: Այսպես՝ «Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի համաձայն», «նախագահի կողմից ստորագրված», «համաշխարհային ֆոնդի կողմից տրված վարկերը» եւ նման այլ բառակապակցություններ ծաղաղություն են հաղորդում մեր լեզվին: Թե ինչու չի կարելի ասել՝ «Ազգային ժողովի ընդունած օրենքի համաձայն», «նախագահի ստորագրած հրամանը», «համաշխարհային ֆոնդի տրամադրած վարկերը» եւ այլն, մնում է անըմբռնելի: Որ հայերենում կա «կողմից» բառը, իրողություն է, բայց պետք է զգաստություն մեջ առնել ճիշտ տեղում: Եվ կամ՝ «խնդրի էությունը կայանում է նրանում, որ...» ասելու փոխարեն ինչու չասել «խնդիրն այն է, որ...»:

Չարչրկված բառերից է եւ «կիսել» բառը: Կիսում եմ քո վիշտը, «կիսում եմ քո կարծիքը» եւ այլն: Կիսել կարելի է հացի պատառը, ինչպե՞ս կիսել համոզմունքը, քո միտքը եւ այլն, մնում է անըմբռնելի: Մի՞թե ավելի բարեհնչուն չէր լինի «ցավակցում եմ», «համաձայն եմ», «համամիտ եմ» եւ նման հասկացությունների գործածությունը:

Այս անհաճո երեւույթը հասկացությունների շփոթն է, երբեմն էլ ոչ ճիշտ արտաբերումը, աղավաղումը: «Սրանց թիվը տասից ավել է», փոխանակ ասելու՝ «տասից ավելի է»: «Ավելը» տանտիրուհու ամենօրյա գործիքն է եւ ոչ մի հարակցություն չունի «ավելի» կամ «առավել» բառերի հետ: «Ընտանեկան» բառի փոխարեն հաճախ կարելի է լսել «ընտանյական» բառը, «գտնել» բառի փոխարեն՝ «գթնել» եւ այլն: Հստակ չէ նաեւ «վերաբերում» եւ «վերաբերվում» բառերի գործածության տեղը: Եվ վերջապես, օժանդակ բայի «է»-ի եւ «ա»-ի խառնաշփոթը՝ «ասում ա», «խոսում ա» եւ այլն, փոխանակ ասելու՝ «ասում է», «խոսում է»:

Ես կարող էի բերել բառերի սխալ ու անտեղի օգտագործման ուրիշ օրինակներ եւս, բայց կարծում եմ այդ առավել համոզիչ կարող են անել լեզվաբանները: Ցանկալի կլիներ, եթե Ազգային ժողովն իր եռօրյա նիստերից մեկին հրավիրեր մի լեզվաբանի՝ պատգամավորներին պարզելու այս մի քանի ճշմարտությունները: Չէ՞ որ ունկնդիրներն անտարբեր չեն մեր պատգամավորների ելույթներին, ոչ միայն նրանց ասելիքին, այլեւ՝ ինչպես ասելուն: Կարծում եմ, վիրավորական ոչինչ չկա այստեղ, եթե Ազգային ժողովը կազմակերպի մեկ անգամ միայն մեկ ժամյա «դասընթաց» «հանուն մեր լեզվի մաքրության»:

ԳԵՎՈՐԳ ԱԲԱՀԱՅԱՆ

«Ես դրանում կյանքիս նոր իմաստն եմ գտնում...»

Արվեստագետի կյանքում գալիս է մի պահ, երբ նա ետ է նայում՝ եվ... տեսնում է կամ չի տեսնում իր հետեւորդներին, իր աշակերտներին: Դրանից էլ հյուսվում են դերասանական երջանիկ կամ դժբախտ ճակատագրերը:

Հայկական արվեստի աշխարհում անվիճելիորեն Գոհար Գասպարյանը ստեղծել է իր վոկալ դպրոցը: Բելկանտոյի ճշմարիտ ակունքներին հասնող այդ դպրոցի բարձրագույն արհեստավարժությունից ձգվում է ավանդույթների գիծը, որի վրա ծաղկել են ոչ թե մեկ կամ երկու տաղանդ, այլ սերունդներ:

Գոհար Գասպարյանն առաջվա պես իր լավագույն աշակերտուհիներից է համարում Օլգա Զաֆարյանին, որը ներկայումս Երեւանի կոնսերվատորիայի դոցենտ է եւ արդեն ինքն ունի վոկալի դասարան: Օլգա Զաֆարյանն իր կարիերան սկսեց 1970-ական թթ. սկզբներին: Այն ժամանակ նա դափնեկիր դարձավ երիտասարդ վոկալիստների Անդրկովկասյան մրցույթում, իսկ 1975 թ. կոնսերվատորիան ավարտելուց հետո Երեւանի օպերայի թատրոնի բեմ բարձրացավ Բելինիի «Նորմա» օպերայի համանուն անչափ դժվար դերերգով: Դիրիժոր Արամ Քաչատրյանի եւ լեհ բեմադրիչ Բոլիսլավ Յանկեւիչի կողմից երեւանյան թատրոնի բեմում այդ օպերայի բեմադրությունն իրադարձություն եղավ համամիութենական մասշտաբով: «Նորմայի» դերերգը կատարում էր անզուգական Գոհար Գասպարյանը: Եվ անմիջապես էլ նրա կողքին հայտնվեց եւս մեկ անուն՝ նրա աշակերտուհի Օլգա Զաֆարյանի անունը: Երիտասարդ երգչուհին կայուն տեղ գրավեց օպերայի կոլեկտիվում: Նա Միհրան Երկաթի արժանավոր գործընկերուհին դարձավ Ավետ Տերտերյանի «Կրակե օղակ» օպերայում եւ Տիգրան Լեւոնյանի Լեոնկավալոյի «Պայացներ» եւ Բիզեի «Կարմեն» օպերաներում: «Նորմայում» նա երգում էր Վահան Միրաքյանի հետ: Հետագայում բեմական ճակատագիրը նրան հիանալի դաշինքով կապեց Գեղամ Գրիգորյանի եւ Բարսեղ Թումանյանի հետ:



Տպավորություն էր թողնում Օլգա Զաֆարյանի կողմից Չիո-Չիո-Սանի դերերգի կատարումը Պուչինիի համանուն օպերայում: Ի դեպ, այդ օպերան երեւանյան թատրոնի խաղացանկում էր դեռ 1994 թ.: Կարծում եմ, որ Տիգրան Լեւոնյանի իրականացրած այդ նրբագեղ, կամերային բեմադրությունն այսօր հրաշալի կերպով կհամալրեր նրա նորարարական ներկայացումների շարքը: Եվ գուցե գլխավոր դերում ունենալով Օլգա Զաֆարյանի աշակերտուհիներից մեկին, ինչպես որ մի ժամանակ ինքը բեմ բարձրացավ մեծն Գոհարի կողքին: Իսկ Օլգա Զաֆարյանն այժմ իրեն հիմնականում մանկավարժությանն է նվիրել: Վոկալի եւ երգեցողության վարպետության ուսուցման դժվարագույն գործում հավատարիմ օգնական է դարձել Երեւանի կոնսերվատորիայի վոկալի ամբիոնի կոնցերտմայստեր եւ հմուտ դաշնակահարուհի Իրինա Զավակյանը:

Օլգա Զաֆարյանի վոկալի դասարանի նվաճումները ներկայացվեցին այն արժանահիշատակ համերգի ժամանակ, որը տեղի ունեցավ օրերս Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում եւ նվիրված էր երգչուհու ստեղծագործական կյանքի 25-ամյակին: Լավ տպավորություն գործեցին Լիլիթ Պետրոսյանի ինքնօրինակ ծիրը, նրա հրաշալի ձայնը: Ունկնդիրները ծափահարություններ եւ ծաղիկներ պարգեւեցին Լուսինե Համբարձումյանին, Կարինե Դեմիրճյանին, Նունե Ավետիսյանին, Աննա Աթանեսյանին: Վարուժան Մարտիրոսյանը հանդիսականների սրտերը նվաճեց նեապոլյան երգի ջերմ եւ միաժամանակ անսովոր կատարմամբ: Նրա հազվագյուտ գեղեցիկ եւ ուժեղ տենորը ձայնը խոստումնալից է: Համերգից հետո երջանիկ երգչուհին եւ մանկավարժն ասաց. «Մանկավարժական աշխատանքում ես կյանքի նոր իմաստ եմ գտնում»:

ՄԱՐԳԱՐԻՏ ՌՈՒԲԵԿՅԱՆ

ԱՄՆ

Բոստոնի լավագույն նկարիչը՝ Դանիել Վարուժան Հաջինյան

Երկրորդ տարին է 47-ամյա նկարիչ Դանիել Վարուժան Հաջինյանն իր յուրօրինակ նկարներով մասնակցում մասաչուսեցի նկարիչների բարեգործական «Գույներ երկնքում» ընդհանուր խորագիրը կրող ցուցահանդեսին, որի բացումը տեղի է ունեցել Բոստոնի Prudential Center Skywalk բարձրահարկ շենքի 50-րդ հարկում տեղադրված դահլիճում, հաղորդում է «Արմինյան Միրոր Սփեթեյթըր» շաբաթաթերթը: Ներկայացված են եղել չորս տարբեր ժանրեր՝ նկարչություն, քանդակագործություն, աղակերտագործություն եւ լուսանկարչություն:

Ցուցահանդեսի պատվավոր նախագահն է եղել քաղաքապետ Պոլ Սելուչին:

Արվեստագետներին Վարուժան անունով ծանոթ Դանիել Հաջինյանը անցյալ տարի ճանաչվել է որպես Բոստոնի լավագույն նկարիչը, իսկ նրա նկարները բնութագրվել են որպես «Մարկ Շագալի եւ Վասարելիի միաձուլում, որը սակայն ամբողջովին ինքնուրույն է: Նա իր նկարները համակում է թրթռուն գույներով եւ անմոռանալի տեսարաններով»:

Վարուժանը դժվարին ճանապարհ է անցել, մինչեւ հասել է ներկայի իր բազմաբնույթ արվեստագետի աստիճանին: Սովորել է Երեւանում, ցուցադրվել Մոսկվայում, Կիեւում եւ եվրոպական մի շարք քաղաքներում: Ռուսաստանից հեռացել է 1979-ին եւ հաստատվել Մասաչուսեցում առանց իր հետ կարողանալ տանելու նկարների իր հավաքածուն: Կատարել է զանազան նվաստացուցիչ աշխատանքներ մինչեւ, դարձել է գովազդների ակադեմիայի (այժմ ՍԿ մեդիա) գեղարվեստական ղեկավարը: Նրա կոմերցիոն գործերի թվում են Բոստոնի Նյուբերի փողոցում 50x50 չափի որմնանկարը, որտեղ պատկերված են նահանգի պատմության 60 կարեւորագույն անձնավորությունները եւ Քոզվեյ պողոտայում գտնվող չորս հարկանի որմնանկարը՝ նվիրված Ամերիկայում իտալական մշակույթին: Նրա նկարները արտացոլում են երաժշտության եւ ռոմանտիկայի հանդեպ իր ունեցած սերը: Վերջին հինգ տարիների ընթացքում նրա ստեղծագործությունները ցուցադրվել են Բոստոնի Դայուսնսեն պատկերասրահում եւ Նյու Յորքի Տրամպ Տաուերում:

Հ. Ծ.

Փարաջանովի եւ Բոջախչյանի գործերը Նյու Յորքում

Սերգեյ Փարաջանովի եւ Վալերի Բոջախչյանի ստեղծագործությունները ցուցադրվելու են Նյու Յորքի Զոյա Գոլդասյան պատկերասրահում մինչեւ այս ամսվա 27-ը, հաղորդում է «Արմինյան Միրոր Սփեթեյթըր» շաբաթաթերթը:

Վալերի Բոջախչյանը, որն այժմ աշխատում է Նյու Յորքում, երկար տարիներ եղել է Թբիլիսիի տիկնիկային թատրոնի բեմադրիչը եւ Փարաջանովի հետ նրա մտերմությունը սկիզբ է առել 1982-ին: Ներկայացված գործերը ընդգրկում են 1982-86 թվերը: Ցուցահանդեսն առանձնահատուկ է այն առումով, որ Հայաստանից դուրս գտնվող Փարաջանովի գործերի ամենամեծ ցուցադրությունն է, որ երբեւէ կազմակերպված է եղել:

Հ. Ծ.

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ

Կոտայքի մարզի դպրոցներում ստուգումներ են

Վերջերս Նոր երգնկայի միջնակարգ դպրոց այցելեցին Կոտայքի մարզի ժողկրթության բաժնի տեսուչներ Միասարյան Արտակը եւ Մուսաելյան Ժորան: Նրանց նպատակն էր ուսումնասիրել հայոց լեզվի դրվածքը ոչ ավարտական դասարաններում: 2-րդ, 5-րդ, 7-րդ եւ 9-րդ դասարաններում տվեցին գրավոր աշխատանքներ: Առաջին երեք դասարանում փոխադրություն, իսկ 9-րդ դասարանում՝ շարադրություն «Գարուն» թեմայով: Արդյունքները հիմնականում գոհացուցիչ են:

ՀԵՂԻՆԵ ԱՆՏՈՆՅԱՆ
Ներսես Ուշտարակեցու անվան համալսարանի ժուռնալիստիկայի բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի
f. Ուշտարակ

ՊՐԵՄԻԵՐԱ

Երեւանի խաղատեսարանի Հր. Դավթյանցի անվան դրամատիկական թատրոն

Հունիսի 18-ին, 25-ին

Սլդո Նիկոլայի

«Սպանել սիրո համար»

(կատակերգություն 2 գործողությամբ)

Թարգմանությունը՝
Նիկոլայ Ծատուրյանի

Բեմադրության գեղարվեստական ղեկավար՝
Արմեն Խանդիկյան

Բեմադրությունը՝
Լեւոն Սահակյանի

Նկարչական ձեւավորումը՝
Կարեն Գրիգորյանի

Ներկայացումների սկիզբը՝ ժ. 18-ին

Թատրոնի գեղարվեստական ղեկավար, ՀՀ վաստակավոր գործիչ
Արմեն Խանդիկյան

digitised by A.R.A.R.@

ՖՈՒՏԲՈԼ

Արթուր Պետրոսյանի «բենեֆիսը»

Իր երկրպագուներին, մասնագետներին շարունակում է զարմացնել Գյումրիի «Շիրակը»: Հանրապետական առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի հերթական 14-րդ տուրում հանդիպելով Հայաստանի նախկին չեմպիոն Երեւանի «Փյունիկ» թիմի հետ, գյումրեցիները խոշոր 6-1 հաշվով հաղթանակ տարան: Խաղի սկզբում մայրաքաղաքի թիմի համար նման աղեղալից արդյունք չէր սպասվում: Ավելին, հանդիպման 20-րդ րոպեին «Փյունիկի» խաղացող Սեյրան Պողոսյանը գրավեց «Շիրակի» դարպասը: 8 րոպե անց գյումրեցի Արարատ Հարությունյանը հավասարեցրեց խաղի հաշիվը, իսկ այնուհետեւ առաջ մղեց իր թիմին: Հետագայում այլեւ ընկավ «Շիրակի» ավագ Սամվել Նիկոլյանը, որը հաշիվը դարձրեց 3-1: Հետո եկավ հանրապետական խոշոր առաջնության գլխավոր ռմբարկու Արթուր Պետրոսյանի ժամը: «Շիրակի» օժտված հարձակվողը կարողացավ 3 անգամ (60-րդ, 84-րդ եւ 87-րդ րոպեներին) գրավել Երեւանի թիմի դարպասը: Այսպիսով, Անդրանիկ Ադամյանի սաները տարան հերթական հաղթանակը եւ շարունակում են միանձնյա գլխավորել մրցաշարային աղյուսակը:

Մի խաղում եւս հեթ-տրիկ գրանցվեց: Եվ այդ խաղը նույնպես տեղի ունեցավ Գյումրիում: Սակայն խաղի մյուս թիմը «Շիրակ-2»-ը 1-3 հաշվով պարտություն կրեց «Էրեբունի-ՀՄՄ»-ից: Հետաքրքիր է, որ բոլոր գոլերը խփվեցին առաջին խաղակեսում: Դաշտի տերերի դարպասը 3 անգամ գրավեց Երեւանի թիմի ֆուտբոլիստ Գեղամ Հովհաննիսյանը (15-րդ, 35-րդ եւ 44-րդ րոպեներին): Իսկ միակ պատասխան գոլի

հեղինակը Արամ Թումասյանն է (21-րդ րոպե):

Հետաքրքրությամբ էր սպասվում «Երեւան»-«Ցեմենտ» խաղը: Հիշեցնենք, որ այս հանդիպումից ընդամենը 6 օր առաջ նրանք Հայաստանի գավաթի խաղարկության եզրափակիչում վիճարկել էին պատվավոր մրցանակը, եւ 3-1 հաշվով հաղթել էր «Ցեմենտը»: Սակայն, հավանաբար, սխալված չենք լինի, եթե ասենք, որ ի տարբերություն գավաթային խաղի, այս հանդիպումը հուսախաբ արեց «Հրազդան» մարզադաշտի տրիբունաներում հավաքվածներին: Թերեւս, առաջին վտանգավոր պահն առաջացավ 11-րդ րոպեին, Արարատի թիմի դարպասի մոտ: Սակայն երեւանցի Արամայիս Տոնոյանը չկարողացավ օգտագործել լավ հնարավորությունը: Ընդամենը 2 րոպե անց գնդակը հայտնվեց «Երեւանի» դարպասում: Այն խաղարկելուց հետո խաղընկերները փոխանցում նասարեանին Տիգրան Հովհաննիսյանին, որն էլ խփեց առաջին գոլը: Խաղի 20-րդ րոպեին երեւանցիները գրավեցին հյուրերի դարպասը, սակայն մրցավարը գոլը չհաշվեց: Կրկին բորբոքվեցին, եւ մրցավարը նախ դեղին, ապա կարմիր քարտ ցույց տվեց դաշտի տերերի առանցքային խաղացողներից մեկին Արամայիս Տոնոյանին:

Ամբողջ 70 րոպե «Ցեմենտը» թվային գերակշռություն ուներ: Թիմը գոլ խփելու բազմաթիվ հնարավորություններ ունեցավ, բայց միայն մեկ անգամ դարպասի գրավում արձանագրվեց: Առաջին խաղակեսի վերջին րոպեին Շիրակ Սաղիկյանը հաշիվը դարձրեց 2-0: Արարատի ֆուտբոլիստները խաղը շահելով հետագայում բավականին շայլորեն վատնում էին գոլային հնարավորությունները:

Լարված պայքարում անցավ Արտաշատում անցկացված «Դվին»-«Արարատ» հանդիպումը: Տեղի պատանի ֆուտբոլիստները լուրջ դիմադրություն ցույց տվեցին փորձառու մրցակիցներին, եւ խաղն ավարտվեց մարտական ոչ-ոքիով՝ 2-2 հաշվով:

Մրցաշարային աղյուսակ

Հունիսի 9-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շիրակ	12	11	1	0	33-5	34
2. Ցեմենտ	12	10	1	1	32-7	31
3. Էրեբունի	13	6	3	4	18-12	21
4. Երեւան	13	6	2	5	16-12	20
5. Փյունիկ	12	4	3	5	15-22	15
6. Արարատ	12	3	5	4	16-17	14
7. Դվին	12	2	3	7	12-23	9
8. Դարաբ.	12	1	5	6	9-17	8
9. Շիրակ-2	12	0	1	11	3-39	1

ՇԱԽՄԱՏ

Կասպարովի մրցակիցը Շիրովն է

Իսպանիայի Կասոռլա քաղաքում ավարտվեց Շախմատի համաշխարհային խորհրդի վարկածով աշխարհի չեմպիոնի կոչման հավակնորդների մրցախաղը Վլադիմիր Կրամնիկի (Ռուսաստան) եւ Ալեքսեյ Շիրովի (Իսպանիա) միջեւ:

Մրցախաղից առաջ մասնագետները գերադասելի էին համարում Կրամնիկի հնարավորությունները: Ռուսաստանցի շախմատիստի անհատական գործակիցն ավելի բարձր է, համաշխարհային դասակարգման ցուցակում նա ավելի բարձր տեղ է գրավում: Եվ, ինչպես նշեց ՇՀԽ-ի նախագահ Լուիս Ռենտերոն, որը նաեւ այս մրցումների նախաձեռնողն է, «աշխարհը սպասում է Կասպարով-Կրամնիկ մրցախաղին»: Սակայն, ինչպես երեւում է, դա չէր հետաքրքրում նախկին ռիգացի Շիրովին: Բացի այդ, ինչպես նշում են մեկնաբանները, Կրամնիկն իր հնարավորություններից զգալիորեն ցածր հանդես եկավ: Հաղթելով մրցախաղի 4-րդ եւ 9-րդ պարտիաներում, իսկ մնացած 7-ը ոչ-ոքի ավարտելով, Շիրովը հանդիպումը շահեց 5,5-3,5 հաշվով եւ իրավունք ստացավ խաղալու ՇՀԽ-ի գծով աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովի հետ: Իսկ Կրամնիկը, որպես «ստիպանք», կստանա մրցանակային ողջ հիմնադրամը՝ 200 հազար դոլար: Իհարկե, Շիրովին ավելի մեծ գումար է սպասում Կասպարովի հետ մրցախաղում:

Այդ մրցախաղը նախատեսվում է անցկացնել այս տարվա հոկտեմբեր ամսին, Իսպանիայում: Ի դեպ, Շիրովը սպառնացել է, որ հաղթելու է նաեւ Կասպարովին:

Մնացել է երկու տուր

Սարաեւոյում ավարտին է մոտեցել «Բոսնիա-98» միջազգային մրցաշարը:

6-րդ եւ 7-րդ տուրերում իրենց դիրքերն ավելի ամրապնդեցին առաջատարներ Վիկտոր Կորչնոյը (Շվեյցարիա) եւ Իվան Սոկոլովը (Բոսնիա): Կորչնոյը պարտության մատնեց բոսնիացիներ Էմիր Դիզդարեւիչին եւ Պրեդրագ Նիկոլիչին, Սոկոլովը՝ երուն Պիկեթին (Հոլանդիա) եւ Կիրիլ Գեորգիեւին (Բուլղարիա): Այժմ այս երկու շախմատիստները 7 հնարավորից վաստակել են 5,5-ական միավոր եւ ընթանում են 1-2-րդ տեղերում: Հաջորդ տեղերում են Եվգենի Բարեեւը (Ռուսաստան)՝ 4,5 միավոր եւ Գեորգիեւը՝ 4 միավոր:

Վերջին երկու հանդիպումները ոչ-ոքի ավարտեց երեւանցի գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը. նախ սպիտակ խաղաքարերով՝ Զդենկո Կոժուլի (Խորվաթիա), ապա սեւերով՝ Բարեեւի հետ: Լպուտյանը վաստակել է 2,5 միավոր եւ ընթանում է 8-րդ տեղում (մրցաշարում հանդես են գալիս 10 գրոսմայստերներ):

ՀՈԿԵՅ

«Վաշինգտոնը» եւ «Պետրոյթը»



Որոշվեցին հոկեյի Ազգային լիգայի Սթենլիի գավաթի խաղարկության եզրափակիչի մասնակիցները:

«Արեւմուտք» խմբում հաղթող դարձավ ներկայիս գավաթակիր «Պետրոյթ Ռեդ Ուինգզ» թիմը, որը «Դալլաս Ստարզի» նկատմամբ առավելության հասավ ընդհանուր 4-2 հաշվով: Թիմի հաջողության մեջ, ինչպես միշտ, մեծ ներդրում ունեցան ռուսաստանցի հոկեյիստներ Սերգեյ Ֆյոդորովը, Վյաչեսլավ Կոզլովը, Վյաչեսլավ Ֆետիսովը, Իգոր Լարիոնովը:

«Արեւելք» խմբում եւս 4-2 հաշիվ գրանցվեց: «Վաշինգտոն Մենատորզը» կարողացավ հաղթանակը կորզել «Բուֆֆալո Սեյբրզ» թիմից, որի դարպասապահը նշանավոր Դոմինիկ Հաշեկն է: Նագանոյի օլիմպիադայի հերոսն այս խաղերում էլ իր թիմին բազմիցս փրկեց վտանգներից, սակայն «Վաշինգտոնը», այնուամենայնիվ, կարողացավ առավելության հասնել: Այսպիսով, Սթենլիի գավաթը կվիճարկեն «Պետրոյթ» եւ «Վաշինգտոն» թիմերը:

Աշխարհի առաջնության նախօրեին

Աշխարհի առաջնության մասնակից 32 հավաքականներից համարյա բոլորն արդեն ժամանել են Ֆրանսիա: Չէ՞ որ վաղը՝ հունիսի 10-ին տեղի կունենա համաշխարհային ֆուտբոլային մեծ տոնի՝ աշխարհի 16-րդ առաջնության հանդիսավոր բացումը:

Առաջնության մասնակիցները վերջին փորձամրցումներն են անցկացնում, վերջին ճշգրտումներն են մտցնում իրենց խաղում:

Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը՝ իր դուստր Կլոդի եւ մի քանի պատգամավորների հետ հյուր եղավ երկրի հավաքական թիմին: Ֆուտբոլիստների եւ մարզիկների շրջանում նա 2,5 ժամ անցկացրեց: «Ես կանխագուշակ եմ, որ մեզ Աշխարհի գավաթի մեծ խաղարկություն է սպասում», ասաց նա: Շիրակը հաջողություն մաղթեց իր ֆուտբոլիստներին եւ ակնարկեց, որ կաշխատի անպայման ներկա գտնվել նրա խաղերին:

Ֆրանսիայի հավաքականը դժվարին հաղթանակ տարավ իր վերջին ստուգողական խաղում: Հելսինկիում կայացած հանդիպման միակ գոլը 84-րդ րոպեին դաշտի տերերի՝ Ֆինլանդիայի հավաքականի դարպասը խփեց երիտասարդ Դավիդ Տրեզեգեն:

Կոպենհագենում հանդիպեցին աշխարհի երկու մասնակիցներ՝ Դանիայի եւ Կամերունի հավաքականները: Աֆրիկացի ֆուտբոլիստները դաշտի տերերին հաղթեցին 2-1 հաշվով: Երկու անգամ աչի ընկավ կամերունցիների հավաքականի նորընտիր ավագ, վետերան Ֆրանսուա Օմամ-Բեյիկը (16-րդ եւ 23-րդ րոպեներին): Միայն հանդիպման վերջին րոպեին Պետեր Մելլերը խփեց պատասխան գոլը:

Բելգիայի հավաքականը, որը վերջին շրջանում այնքան էլ արտահայտիչ խաղ չէր ցույց տալիս, վերջապես ուրախացրեց իր երկրպագուներին: Բրյուսելում հանդիպելով աշխարհի առաջնության մեկ այլ մասնակցի Կոլումբիայի հավաքականի հետ, բելգիացիները խաղի առաջին կես ժամից հետո արդեն առջեւում էին 2-0 հաշվով: գոլերը խփեցին Դանի Բաֆֆենը եւ Մարկ Վիլմոթսը: Հետագայում խաղի հաշիվն այդպես էլ չփոխվեց: Կոլումբիացիները, որոնք մինչ այդ 1-3 հաշվով պարտություն էին կրել Գերմանիայի հավաքականից, սովորականի պես հույսերը դրել էին անհատական խաղի վրա, սակայն նրանց առաջատար Ֆաուստինո Ասպրիլյայի վտանգավոր հարվածները չեզոքացրեց Բելգիայի թիմի դարպասապահ Ֆիլիպ դե Բիլդեն:

Գործադուլը սպառնում է ֆոսսային վիճակ ստեղծել: «Էյր Ֆրանս» ավիաընկերության ղեկավարների եւ օդաչուների արհմիության բանակցությունները ոչ մի արդյունք չեն տալիս: Ճիշտ է, աշխարհի առաջնության մասնակից հավաքական թիմերը ժամանում են Ֆրանսիա, սակայն գործադուլին մասնակցում են նաեւ օդանավակայանների բանվորները, որոնք հրաժարվում են սպասարկել չվերթները: Վիճակը կարող է ավելի խորանալ, քանի որ սպառնում են գործադուլ անել նաեւ գնացքների մեքենավարները: Երկաթգծի հսկիչները արդեն դուրս չեն գալիս աշխատանքի: Ելիսեյան դաշտերում բողոքի ցույց արեցին նաեւ ոստիկանները: Բոլորը տնտեսական պահանջներ են ներկայացնում:

Յուրովի մասնակցեք ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերին

«Նաիրի» կինոթատրոնի «Սինեմա» սրճարանը հունիսի 10-ից ֆուտբոլասերներին հրավիրում է դիտելու ֆուտբոլի Աշխարհի առաջնության խաղերը ուղիղ եթերով եւ սպորտային մթնոլորտում: Խաղերի արդյունքները ճիշտ կռահողները կստանան մրցանակներ:

Հեռ. 56-54-32, 58-27-71:

ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՍՊՈՐՏ

«Ջիրո դ'Իտալիան» ավարտվեց

Պատվո պատվանդանին հեծանվավազքի հաղթողներն են

Ավարտվեց տարվա երեք խոշոր բազմօրյա հեծանվավազքից առաջինը՝ «Ջիրո դ'Իտալիան»: 22-օրյա մրցադաշտերի արդյունքում հաղթող դարձավ իտալացի Մարկո Պանտանին, որը ներկայացնում է «Մերկանտոնե Ունո» թիմը: Երկրորդ տեղը գրավեց 1996 թ. «Ջիրո»-ի հաղթող, ռուսաստանցի Պավել Տոնկովը («Տաղեի»): Նա Պանտանիից հետ մնաց 1,5 րոպեով: Դա իհարկե շատ չէ, եթե հաշվի առնենք, որ հեծանվորդները հաղթահարեցին ընդհանուր առմամբ 3800 կմ տարածություն:

ԲԱԺՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՈՍԶՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Օրվա հետքով

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՄՈՒԼ

Դեմիրել-Քոչարյան հանդիպումը՝ սառը մթնոլորտում

ՍՏԱՄԲՈՒԼ, 8 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Յալթայում կայացած Սեւծովյան տնտեսական համագործակցության անդամ 11 պետությունների ղեկավարների գագաթաժողովի մասին մամուլում արդեն արվել են համապատասխան լուսաբանումներ, սակայն թուրքական մամուլը լրացուցիչ տեղեկություններ է շարունակում հաղորդել:

ՍԾՏՀ հռչակագրի ստորագրման հանդիսավոր արարողությունը կայացել է 20 րոպե ուշացումով, որովհետեւ 9 պետությունների ղեկավարները սպասում էին Հայաստանի եւ Թուրքիայի նախագահներին, որոնք գագաթաժողովի նիստերի ընդմիջմանը առանձնազրույց ունեցան: Թուրքական թերթերի համաձայն գագաթաժողովը դարձել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների բանավեճի թատերաբեմ: Ալիեւը Ղարաբաղի թեման շոշափելու ժամանակ պահանջել է, որ «Հայաստանը դադարեցնի իր զավթողական քաղաքականությունը»: Ի պատասխան Քոչարյանը հայտարարել է, թե Ղարաբաղյան հարցը ստեղծվել է միայն Ադրբեջանի ջանքերով: Վիճաբանությունը կանխելու նպատակով Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչման կողմերին ազդարարել է, թե գագաթաժողովը երկկողմանի վիճաբանությունների հարմար վայր չէ:

Նշվում է նաեւ, որ Սուլեյման Դեմիրելի եւ Ռոբերտ Քոչարյանի ավելի քան կես ժամ տեւած տեսակցությունն ընթացել է սառը մթնոլորտում: Ըստ թուրքական մամուլի, Դեմիրելը սպասել է, որ տեսակցության համար նախաձայնը կատարվի հայերի կողմից, սակայն քանի որ մինչեւ վերջին պահը Հայաստանի նախագահ Քոչարյանը նախաձեռնություն չի դրսեւորել, տեսակցությունը կայացել է Կուչմայի միջնորդությամբ: Թերթերը գրում են, որ Դեմիրելն ասել է հետեւյալը. «Եթե մեզ հետ բարեկամանալ, կբահեմ դուք»: Դեմիրելը պահանջել է, որ Հայաստանը Ղարաբաղյան հարցին շուտափոյթ լուծում տալու ուղղությամբ դրական քայլեր ձեռնարկի: Նա ընդադատել է Քոչարյանի կարծր եւ անզիջում կեցվածքը Ղարաբաղյան հարցում: Դեմիրելն անդրադարձել է նաեւ Ֆրանսիայի խորհրդարանի կողմից օրակարգ բերված Հայոց ցեղասպանության հարցին եւ սպառնացել. «Եթե պատմական թշնամությունը վերարծարծեմ, դուք կտուժեմ»: Ըստ թերթերի, Քոչարյանը Դեմիրելին հայտնել է, թե «անհրաժեշտ է պատմությունը վերաքննության ենթարկել», իսկ Դեմիրելը պատասխանել. «Կարծեմ դուք անցյալի մասին եք խոսում: Ի՞նչ անցյալ, Հայաստանի Հանրապետությունը հազիվ վեց տարվա անցյալ ունի»: Դեմիրելը շեշտել է կովկասյան տարածաշրջանում համերաշխության հաստատման կարեւորությունը եւ ասել, որ Թուրքիան Հայաստանի հետ ուղղակիորեն խնդիր չունի, բայց թուրքական հանրային կարծիքը Ադրբեջանի նյութի շուրջ չափազանց զգայուն է: Տեսակցության պատմությունը մամուլը ամփոփում է հետեւյալ կերպ. «Թուրքիայի տեսանկյունից Քոչարյանն իր դիրքորոշմամբ արժեւորվում է որպես անհաշտ բնավորության տեր եւ հարաբերություններում ձգված վիճակ առաջացնող ղեկավար»:

Քոչարյանը, Դեմիրելի հետ տեսակցելուց հետո, հանդիպել է նաեւ Հունաստանի վարչապետ Սիմիտիսի հետ: Վերջինիս առաջարկով: Հանդիպման ընթացքում, նույն աղբյուրների համաձայն, ՀՀ նախագահը Սիմիտիսին տեղեկություններ է հաղորդել Դեմիրելի հետ իր տեսակցության մանրամասների մասին:

Գագաթաժողովի ընթացքում թուրք լրագրողները ֆանիցս շրջապատել են Ռ. Քոչարյանին, որոնց հարցերին ի պատասխան ՀՀ նախագահը հայտարարել է, թե Հայաստանը միշտ էլ պատրաստ է Թուրքիայի հետ զարգացնել իր կապերը, բայց Թուրքիան միշտ պայմաններ է առաջ քաշում: «Հայաստանը ցանկանում է կապերն ամրապնդել առանց որեւէ նախապայմանի», ասել է նա:

Ըստ թուրք լրագրողների, Քոչարյանն ասել է, որ «պետք է նստել եւ մանրամասն խոսել առկա բոլոր խնդիրների մասին: Բայց եթե Ղարաբաղի հարցով մեզ անկյուն քշեք, եւ Ղարաբաղի հարցը մեր առջեւ դնեք որպես խոչընդոտ, այն ժամանակ մենք էլ սեղանին կդնենք ցեղասպանությունը»:

Թղթակիցներից մեկի հարցին, թե Հայաստանն ինչ է մտածում Ֆրանսիայի խորհրդարանի կողմից ընդունված Հայոց ցեղասպանության օրինագծի կապակցությամբ, Քոչարյանն ասել է, որ ինքը չի ցանկանում անցյալով ապրել, այլ նայում է ապագային: Ըստ նրա, պատմական իրականությունը, որն արգելք է Թուրքիա-Հայաստան հարաբերությունների զարգացմանը, պետք է դրվի սեղանին, եւ այդ նյութերի մասին երկուսդ գաղափարներ արտահայտվեն: «Եթե պատմությունը հասկեցնենք, այն ժամանակ հարցերը կլուծվեն», ասել է նա:

Մեկ այլ թղթակցի հարցին, թե Թուրքիան այն մտավախությունն ունի, որ Ցեղասպանության օրինագծի վավերացումն ահաբեկչության նոր ալիք կհարուցի, Քոչարյանը պատասխանել է, որ ինքը համակարծիք չէ դրա հետ: «Պատմական իրողությունների հրապարակումը եւ քննարկումը ահաբեկչություն չի հրահրում, ընդհակառակը, դադարեցնում է ահաբեկչությունը»: Երբ Քոչարյանին հիշեցրել են, որ «Թուրքիան մեծապես անհանգիստ է Դաշնակցություն կուսակցության վերսին գործուն դիրքերում հայտնվելու հանգամանքից», ՀՀ նախագահը պատասխանել է հետեւյալը. «Մենք էլ Թուրքիայում կատարված բազմաթիվ տեղաշարժերից ենք անհանգիստ: Դաշնակցություն կուսակցության գործունեությունը վերսին թույլատրելու մեր որոշումը ժողովրդավարական քայլ է: Մենք դեմ ենք, որ Հայաստանում որեւէ կուսակցության գործունեություն արգելվի»: Իսկ Դեմիրելի հետ տեսակցության տպավորության վերաբերյալ հարցին Քոչարյանը հայտնել է, թե այդ տեսակցությունից հետո այն տպավորությունն է ստացել, որ Թուրքիա-Հայաստան հարաբերությունները վերադարձել են իրենց սկզբնակետին: Ըստ Ռ. Քոչարյանի, Թուրքիայի կողմից Հայաստանի դեմ որդեգրած քաղաքականությունը ստիպում է Հայաստանին հետզհետե ավելի ու ավելի մերձենալ Ռուսաստանին:

«ՄԻՍՍ ՀԱՅԱՍՏԱՆ-98»

Գոհար Հարությունյանը կմասնակցի «Միս Եվրոպա» 50-րդ հոբելյանական մրցույթին

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Հունիսի 5-ին, արդեն 3-րդ անգամ ընտրվեց Հայաստանի ամենանրբագեղ եւ գեղեցիկ աղջիկը՝ «Միս Հայաստան-98»-ը: Այս անգամ առաջին տեղը գրավեց «Միս Հայաստան-97»-ին երկրորդ մրցանակ շահած Գոհար Հարությունյանը, երկրորդը Անի Ղամարյանն էր, 3-ը՝ Իսկուհի Ազարյանը: Առաջին հնգյակում ընդգրկված մասնակիցների հետ մրցույթի կազմկոմիտեն կնքեց պայմանագիր տարբեր մրցույթներին նրանց ներկայացնելու մասին:

Ինչպես լրագրողներին հայտնեց երեւանի կամերային թատրոնի տնօրեն Ռուբեն Թոքոյանը, Գոհար Հարությունյանը համապատասխանում է միջազգային չափանիշներին ինչպես ֆիզիկական տվյալներով (հասակը 180 սմ), այնպես էլ ինտելեկտով: Նա օգոստոսին մասնակցելու է «Միս Եվրոպա» 50 դդ հոբելյանական մրցույթին, իսկ մինչ այդ արդեն մեծ հաջողություններ է հասել Հարավային Կորեայում անցկացված միջազգային «Միս ուսանողուհի» մրցույթում, որտեղ ընդգրկվել է առաջին 10-յակում, եւ Հնդկաստանում անցկացված «Միս տուրիզմ» մրցույթում, որտեղ 6 տիտղոսներից տիրացել է 2-ին:

Այն հարցին, թե ինչու մասնակիցների մի մասը չի համապատասխանում մրցույթի չափանիշներին, պրն. Թոքոյանը պատասխանեց, որ Հայաստանի մարզերն ուղարկում են իրենց հաղթողներին, որոնց երեւանի կազմկոմիտեն պարտավոր է ընդունել:

Հաղթողներին հանձնվեցին բազմաթիվ մրցանակներ, մեդալներ եւ դիպլոմներ: Մրցանակ հանձնողների թվում էին «Լանդակոլոր» ֆիրման, «Nostalgi» ռադիոկայանը, ՀՀ Ազգային ռադիոն, «Նոր հայեր» ՈՒՀԱ թիմը, որոնք իրենց նախընտրած «Նոր հայուհուն» հրավիրեցին մասնակցելու օգոստոսին Սոչիում կայանալիք խաղին, «Կրեդիտ-երեւան» բանկը, Զեյթունի կահույքի սրահը, որի աշխատակիցներն իրենց նվերը՝ ադամանդյա մատանին հանեցին իրենց արտադրած 12 աթոռներից 3-ը պատռելով, «Կիլիկիա» գարեջրի գործարանը, «Այֆոն» ընկերությունը եւ բազմաթիվ այլ կազմակերպություններ: Իսկ աղջիկներին տրվող անվանումներից էին «Միս երազանք», «Միս հմայք», «Միս հրաշք», նույնիսկ լրագրողները եւ հանդիսատեսը ընդմիջման ժամանակ հնարավորություն ունեցան ընտրելու իրենց գեղեցկուհուն «Միս մամուլ» եւ «Միս հանդիսատես»:

Մրցույթում ներկայացված էին 24 մասնակիցներ Հայաստանի 6 մարզերից եւ երեւանից, առաջին անգամ մասնակցում էր նաեւ Արցախի ներկայացուցիչը, որն ընդգրկվեց առաջին 7-յակում: Իսկ ժյուրիի կազմում էին Հայաստանի հայտնի գործիչներ՝ Կոմպոզիտորների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանը, լրագրող Ռոբերտ Մավիսակալյանը, այնպես էլ հյուրեր Ռուսաստանից եւ Իտալիայից:

Ավտոբուսի հրդեհի հետեւանքով մի երեխա մահացել է, 9 մարդու վիճակը ծանր է

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունիսի 7-ի երեկոյան Նուբարաշեն-Բարձրաշեն ճանապարհին ավտոբուսում բռնկած հրդեհի հետեւանքով 20 մարդ՝ Արարատ մարզի Արգանուշ գյուղի միջնակարգ դպրոցի կիրակնօրյա հանգստի մեկնած աշակերտներ եւ նրանց ուղեկցող ուսուցիչներ, տարբեր աստիճանի այրվածքներ են ստացել եւ տեղափոխվել երեւանի ու Արտաշատի հիվանդանոցներ:

ՆԳ եւ ԱԱ նախարարության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունից հայտնեցին, որ դեպքի վայր մեկնած հրշեջներին հաջողվել է մարել ավտոբուսն ամբողջովին ճարակած հրդեհը:

Պարզվել է, որ տունդարձի ճանապարհին, վարորդը՝ նույն գյուղի բնակիչ Ա. Եսայանը, ավտոբուսը լիցքավորել է Նուբարաշենի գազալցավորման կայանում, որտեղից 7-8 հարյուր մետր չհեռացած՝ շարժիչի մասում պայթյուն է տեղի ունեցել: Հրդեհը տարածվել է միանգամից: Վարորդը, արագ կողմնորոշվելով, երկաթյա ձողով կոտրել է պատակիները եւ օգնել երեխաներին դուրս գալ ավտոբուսից:

Ստացած այրվածքներից 12-ամյա Հովակիմ Հակոբյանը հիվանդանոցում հունիսի 8-ին մահացել է, հիվանդանոց տեղափոխվածներից 9-ի վիճակը, ըստ բժիշկների, ծանր է, այրվածքները 3-4-րդ աստիճանի են:

ՆԳ եւ ԱԱ նախարարի հրամանով ստեղծվել է հանձնաժողով, որը մեկշաբաթյա ժամկետում պետք է պարզի ավտոբուսի տեխնիկական վիճակի, շահագործման կանոնների պահպանման եւ հրդեհի առաջացման պատճառների մասին բոլոր մանրամասները: Բացի կոնկրետ դեպքով կատարվող գործողություններից, հանձնաժողովը պետք է մշակի եւ նախարարի հաստատմանը ներկայացնի միջոցառումների համապատասխան ծրագիր՝ հանրապետության տարածքում շահագործվող մարդատար ավտոբուսների տեխնիկական վիճակը պարզելու եւ շահագործման անվտանգության կանոններն ապահովելու նպատակով:

Ֆրանսիական «Պեռնո Ռիկար»-ը հաղթող է...

Սկիզբը էջ 1

ա) կոնյակն արտադրվելու է բացառապես հայկական հումից,

բ) շշալցումն իրականացվելու է բացառապես Հայաստանում,

գ) պահպանվելու են հայկական կոնյակի բոլոր հատկանիշները (համը եւ այլն) ու պիտակների ձեւավորման առանձնահատկությունները, իսկ պիտակների վրա հայերեն, ռուսերեն եւ անգլերեն գրվելու է «Հայկական կոնյակ» կամ 'Armenian Brandy',

դ) մոտակա 5 տարում կոնյակի արտադրության ծավալը հասցվելու է տարեկան 425 հազար դեկալիտրի, այն դեպքում, երբ վերջին երեք տարում կազմել է 270400 դեկալիտր,

ե) մոտակա տասը տարում «Պեռնո Ռիկարը» չի կարող գործարանը վաճառել երրորդ կողմի առանց Հայաստանի կառավարության թույլտվության, իսկ տասը տարի անց կարող է վաճառել միայն որոշակի պայմանների կատարման դեպքում,

զ) վաճառվող կոնյակների միջին տարիքը կլինի ոչ պակաս, քան տասը տարի:

Ասուլիսում նշվեց, որ ակնկալվում է, որ մոտակա հինգ տարում կոնյակի գործարանը խաղողի գնումները կհասցնի տարեկան 40 հազար տոննայի (1997 թ. եղել է 15 հազար): Ընդսմին, «Պեռնո Ռիկարը» նախատեսում է գյուղացիների հետ գործարքներ կնքել ուղղակիորեն, առանց միջանկյալ գնորդների:

Կառավարությունը հույս ունի, որ «Պեռնո Ռիկարը», հանդիսանալով աշխարհում խոշորագույն մրգեր գնողներից մեկը, կարող է զգալիորեն ավելացնել խնձորի, ծիրանի եւ այլ մրգերի գնումները Հայաստանում:

Ասուլիսի մասնակիցները նշեցին, որ վերջին շաբաթներում Հայաստանի մամուլում եւ հատկապես խորհրդարանում բարձրացված աղմուկը կոնյակի գործարանի մասնավորեցման մասին բացասական ազդեցություն ունեցավ բանակցությունների վրա: Ըստ Վահրամ Ավանեսյանի, եթե խորհրդարանը ենթարկվի հնչող պահանջներին ու հանի կոնյակի գործարանը մասնավորեցման ցուցակից, ապա հետագայում այդ գործարանը այլեւս երբեք չի հաջողվի վաճառել, իսկ ցանկացած նոր գործարան մասնավորեցնելու փորձի դեպքում ինվեստորները պահանջ կդնեն, որ «խորհրդարանը նախապես որոշում ընդունի, որ տվյալ օբյեկտը չի հանվելու սեփականաշնորհման ցուցակից»:

Կոնյակի գործարանը երկրորդ ձեռնարկությունն է, որ Հայաստանի կառավարությունը փորձում է մասնավորեցնել օտարերկրյա հեղինակավոր ներդնողների վաճառելու միջոցով: Առաջինը «Արմենտել» հեռախոսային ընկերությունն էր, որի բաժնետոմսերի 90 տոկոսը վաճառվել է հունական OTE ընկերությանը:

Մրցույթի հայտեր ներկայացնելու վերջին ժամկետը եղել է 1998 թ. փետրվարի 4-ը: Պրն. Ավանեսյանը հրաժարվեց ասել, թե «Պեռնո Ռիկարից» բացի ինչ ընկերություններ են մասնակցել մրցույթին եւ որքա՞ն պետք է Հայաստանը վճարի «Մերիլ Լինչին» միջնորդության համար: Նա միայն ասաց, որ այդ վճարը միջազգային պրակտիկայում ընդունված 7 տոկոսից «շատ ավելի ցածր է»:

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 838 Տպաքանակը՝ 3500 Ստորագրված է տպագրության՝ 8. 05. 1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@